



## Հայկական Քաղաքական Կուսակցությունները Հարիւրամեակի Գծով Կը Խորհրդակցին

Ա.Լ.Թ.Ա.ՏԻՆԱ.- Հայկական քաղաքական ասոցիացիան երեք կուսակցություններու՝ ՄԴՀԿԻ, ՀՅԴԻ եւ ՌԱԿԻ ներկայացուցիչները, Չորեքշաբթի, Մայիս 28ին հանդիպում մը ունեցած են ՌԱԿԻ «Պէշկէօրուբեան» կեդրոնին մէջ, խորհրդակցութիւններ ունենալու համար Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակի նախապատրաստական աշխատանքներուն շուրջ, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Ամերիկայի հայութիւնը, Հայաստանը, Արցախի եւ Սփիւռքը յուզող շարք մը հարցեր քննելու համար:

Հանդիպումին մասնակցած են շրջանային ղեկավար մարմիններու ատենապետներն ու այլ անդամներ: Քննարկուած նիւթերու շարքին էին՝ «Հայաստան» հիմնադրամը, Քեսապի տագնապը, սուրիահայութեան օժանդակութիւն հասցնելու աշխատանքը, ինչպէս նաեւ Հայաստանէն եւ Միջին Արեւելքէն արտագաղթը:

Ժողովի աւարտին, որոշուած է նման հանդիպումներ աւելի յաճախ գումարել, քննարկելու համար համայնքին ու հայութեան անմիջական մտահոգութիւնները:

## Չոհեր Հալէպի Հայաշատ Թաղամասերու Ռմբակոծումներու Հետեւանքով

Հալէպի տարբեր շրջաններուն եւ յատկապէս Նոր Գիւղ հայաբնակ թաղամասերուն վրայ ուժեղ օդակոծումները շարունակական բնուէթ կը կրեն վերջին օրերուն: 1957-ի ծնունդ Անդրանիկ Գանթարճեանը գոհուած է ուղեւորութեան ընթացքին պատճառով վնասներուն հետեւանքով: Անոր մարմինը յայտնաբերուած է փլատակներու տակ: Նոյն թաղամասի փլատակներուն տակ վիրաւորը յայտնաբերուած է Մանուկ Գազէլեանը, իսկ Չալա թաղամասին մէջ վիրաւորուած է Յովսէփ Արամեան: Վիրաւորներու վիճակը կայուն կը նկատուի:



Նոր Գիւղի աւերուած հայաշատ թաղամասերու վիճակը

Երկու հրթիռ պայթած է Ազգային Չաւարեան վարժարանի մօտ, նիւթական մեծ վնասներ հասցնելով շրջապատին:

Նոր գիւղ թաղամասը վերջին օրերու հրթիռակոծութիւններու հետեւանքով անճանաչելի դարձած է. քարուքանդ եղած փողոցներ, վնասուած ազգապատկան շէնքեր, եկեղեցիներ ու դպրոցներ: Վնասուած է Սահակեան վար-

ժարանը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, «Կիլիկիա» ազգային շէնքը, բազմաթիւ բնակարաններ, խանութներ եւ արհեստանոցներ:

Շրջանի հայ բնակիչները կը շարունակեն մնալ նկուղներու կամ ազգապատկան շէնքերու սրահներուն մէջ:

## «Ղարաբաղի Խնդիրը Պետք է լուծուի Մատրիտեան Սկզբունքներու Եւ Միջազգային Իրաւունքի Հիման Կրայ».- Երեւանի Սեչ Յայտարարեց ԵԱՀԿ Նախագահը



ԵԱՀԿ եւ Հայաստանի նախահաները մամոյա տուլիսի ընթացքին

Յունիս 4-ին պաշտօնական այցով Երեւան ժամանած ԵԱՀԿ գործող նախագահ եւ Չուիցերիոյ համադաշնութեան նախագահ Տիտիէ Պուրկհալտըրը ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ իր ունեցած հանդիպումին յաջորդած միատեղ մամոյա տուլիսի ընթացքին յայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար «ստատուս քոն» ընդունելի տարբերակ չէ եւ ԵԱՀԿ Մինսկի խումբը Հայաստանի ու Ատրպէյճանի հետ պէտք է փորձէ քայլ առ քայլ շարժիլ դէպի խաղաղութիւն:

«Մենք՝ որպէս գուիցերիական նախագահութիւն, պիտի փորձենք ամրապնդել զինադադարի ռեժիմը, խրախուսել միջադէպերու հետախուզման ռեժիմը, խրախուսել երկխօսութիւնը, ինչ որ կը նշանակէ առաջնորդութիւն նախագահներու կողմէ: Մենք կ'աջակցինք Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի հրաւերին՝ երկու երկիրներու նախագահներուն, հանդիպելու Ֆրանսայի մէջ, ինչ որ կը նշանակէ, որ նոր հանդիպումը պէտք է դառնայ նոր փուլի սկիզբ, ուր կառուցուածքային նոր բանակցութիւններ կրնան տեղի ունենալ եւ կրնան հանգեցնել հաշտութեան կնքման: Այդ պէտք է

ըլլայ Մատրիտեան սկզբունքի եւ Միջազգային իրաւունքի հիման վրայ», - ըսաւ ԵԱՀԿ նախագահը:

Տիտիէ Պուրկհալտըրը յայտնեց նաեւ, որ իրենք յանուն խաղաղութեան կրնան աջակցիլ երկու երկիրներուն միջեւ միջնորդութիւններու: «Խաղաղութեան տարածումը այն արժէքներէն մէկն է, որ ամբողջութեամբ է մեր Սահմանադրութեան մէջ», - ըսաւ ան:

Իր կարգին Սերժ Սարգսեան յայտարարեց, որ ուժի կիրառման սպառնալիքը եւ զինադադարի պարբերաբար խախտումները մեծ վնաս կը հասցնեն Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացին:

«Մենք համակարծիք ենք, որ ռազմական ուղով խնդիրը չի կարող լուծուել, այլ միայն աւելի է բարդացնելու այս հարցը: Ուժի կիրառման սպառնալիքը եւ զինադադարի պարբերաբար խախտումները մեծ վնաս են հասցնում բանակցային գործընթացին: Երբ խօսում ենք վստահութեան ամրապնդման միջոցառումների մասին, մենք յստակ նշում ենք, որ առաջնահերթ է ԼՂ ժողովրդի նկատմամբ պատշաճ յարգանքի դրսեւորումը: Ի վերջոյ այս պայ-

Շաբ.ը էջ 4

## ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ՀԵՏ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ Յակոբ Տիգրանեան Երեւանի մէջ տեսակցեցաւ Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի հետ: Տեսակցութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Գէորգ Պէրքուպէտեանը:

Զրուցակիցները գոհունակութիւն յայտնեցին համատեղ աշխատանքի համար եւ պայմանաւորուեցան աւելի խորացնել եւ ամրապնդել համագործակցութիւնը:

Կարեւորուեցաւ կառուցներուն միջեւ տեղեկատուական փոխանակումը: Նախարարը ներկայացուց նախարարութեան 2014 թուականի ծրագիրները եւ կոչ ուղղեց աշխուժութեամբ մասնակցելու երիտասարդական ծրագիրներուն, որոնց հիմնական նպատակը հայոց լեզուի եւ մշակուցի դա սաւանդման, հայրենաստանաշու թեան միջոցաւ հայապահպանութիւնն է: Արձարծուեցան նաեւ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման ձեռնարկները:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կ'ընդունեն՞ք Սարգսեանն ու Ալիեւը Օլանդի հրաւերը

ՄԵՏԱՔՄԻԱ ՇԱԼՈՒՆԾ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը շաբաթ օրը ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջէյ Կասպրյուկին: Համանախագահների թւում գտնուել է նաեւ Պիեռ Անդրէյ, ով ֆրանսացի համանախագահ Ժակ Շորին փոխարինելու է մօտ ժամանակներս: Հանդիպմանը կարծիքներ են փոխանակուել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ բանակցութիւնների ընթացիկ վիճակի եւ հեռանկարի հետ կապուած հարցերում:

Ինչպէս յայտնի է, ԵԱՀԿ ՄԽԻ համանախագահները եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջէյ Կասպրյուկը Լեւոնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգաւորման գործընթացը քննարկելու նպատակով Մայիսի 16-19-ը այցելեցին տարածաշրջան: Համանախագահների հիմնական նպատակը Լեւոնային Ղարաբաղ, Քելբաջար եւ Լաչին այցելութիւններն էին: Տարածաշրջան այցի շրջանակներում համանախագահները Երեւանում եւ Պաքուում հանդիպեցին բարձրաստիճան պաշտօնեաների, նաեւ Լեւոնային Ղարաբաղի ղեկավարութեան հետ: Սակայն Պաքուում համանախագահներին այդ օրերին ընդունեց միայն Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարը: Դա այն փուլն էր, երբ Պաքուում կրքեր էին բորբոքուել Ատրպէյճանում ԱՄՆ-ի դեսպանի եւ ամերիկացի համանախագահի

ուղղութեամբ:

Այդ կրքերը դեռ չեն էլ մարել: Պաշտօնական Պաքու շարունակում է քննադատել թէ ԵԱՀԿ Մինսկի խմբի «անպտուղ» աշխատանքը, թէ իր երկրում ԱՄՆ դեսպան Մորնինգսթարի աղմկայարույց հարցազրույցը:

Պաշտօնական Ուաշինգտոնից էլ շարունակում են ճնշումները Պաքուի ուղղութեամբ: ԱՄՆ իշխանութիւնները մէկը միւսի հետեւից շարունակում են կոշտ յայտարարութիւններով հանդէս գալ: Այս անգամ հերթը ԱՄՆ պետդեպարտամենտին էր: ԱՄՆ պետդեպարտամենտի մամլոյ քարտուղար Ջեն Փասկին՝ մեկնաբանել է Իլհամ Ալիեւի՝ հայկական կողմին հասցէագրուած վերջին սպառնալիքները, թէ «Հայաստանին սպասուած է մութ ապագայ, եթէ նա գործերը դուրս չբերի Ղարաբաղից եւ չձեռք բերի Երեւանի հարցի խաղաղ կարգաւորման գործընթացը, եւ կողմերը պէտք է գերծ մնան խաղաղութեան գործընթացը խաթարող գործընթացից»:

Փասկին յաւելել է, որ նման յայտարարութիւնները խաթարում են Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորմանն ուղղուած ջանքերը: Փասկին յիշեցրել է ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող երկրների դիրքորոշումը, որ կողմերը պէտք է գերծ մնան ուժ կիրառելու մասին սպառնալիքներից եւ պէտք է գործեն՝ հաշուի առնելով 2009-2013

թուականներին երեք երկրների նախագահների արած յայտարարութիւնները:

Պաքուում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների պաշտօնական հանդիպումներին զուգահեռ Ատրպէյճանում Ֆրանսայի դեսպան Պասկալ Մոնյէն յայտարարել է, թէ հրադադարի հաստատումից 20 տարի անց Լեւոնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգաւորման համար պէտք է կոնկրետ քայլեր ձեռնարկուեն, քանի որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութիւնն ազդեցութիւն կ'ունենայ տարածաշրջանում կայունութեան եւ բարեկեցութեան վրայ:

«Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանդը պատրաստակամութիւն է յայտնել Ֆրանսայում համանախագահների հետ համատեղ ընդունելու Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներին: Օլանդը կողմերի միջեւ խաղաղութեան հասնելու համար կոնկրետ առաջարկներ է արել, եւ նախագահները կարող են դրանք քննարկել Ֆրանսայում», նշել է Մոնյէն:

Դեսպանը նաեւ անհանգստութիւն է յայտնել վերջին օրերին սահմանին կրակի դադարեցման ռեժիմի խախտումների կապակցութեամբ: Ֆրանսացի դիւանագէտը յաւելել է, որ Ֆրանսան հաւատարիմ է մնում Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հաստատման հասնելուն եւ ձգտում է դրա համար պայմաններ ստեղծել:

Կարելի է ենթադրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան վերջին այցելութեան փորձում են կողմ-

րից ստանալ Սարգսեան-Ալիեւ հնարաւոր հանդիպման համաձայնութիւնը եւ կազմակերպել այդ հանդիպումը, թերեւս, Օլանդի հովանու ներքոյ: Առայժմ կողմերը լռում են այն մասին, թէ առաջիկայում հնարաւոր է նման հանդիպում կազմակերպել, թէ՛ ոչ:

Պարզ է, որ ամերիկացի համանախագահ Ուորլիքի յայտնի ելույթից յետոյ կողմերը որոշակի կաշկանդուածութիւն են զգում, որովհետեւ Ուորլիքի «բացայայտած» կարգաւորման առաջարկները երկու կողմերի համար էլ տհաճ դրոյթներ էին պարունակում, թէեւ դրանք վաղուց բացայայտուած սկզբունքներ էին:

Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցութեան շուրջ բարդութիւններին զուգահեռ, Իհարկէ, հայկական կողմը կարող է ամուր դիրքերից հանդէս գալ, քանի որ պաշտօնական Պաքու վերջին շրջանում աննախադէպ ռազմաշունչ կեցուածք է դրսևորել, ակնյայտօրէն խաղաղ կարգաւորման կողմնակից չէ, միւս կողմից Եւրասիական ինտեգրացիոն պրոցեսում Ղարաբաղեան խաղաթուղթը շրջանառութեան մէջ դնելը կարող է ամրապնդել հայկական կողմի դիրքերը՝ Պաքուի սպառնալուցողական դիրքորոշումը փաստելու համար:

Այս իրավիճակում, Իհարկէ, կարելի է հանգամանքը, թէ ինչպէս կը դրսևորի պաշտօնական Մոսկուան: Կը ցանկանա՞յ Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում Մոսկուան հանդէս գալ առաջընթացի ուղղութեամբ, հայկական կողմին դրդել կարգաւորման ուղղութեամբ քայլ անելուց: Կամ՝ աւելի ձիշդ կը լինի ասել, եթէ որոշի դրդել՝ ի՞նչ գնով: «ՀԱՅԵԼԻ»

Սերժ Սարգսեանը վերջնագիր է ներկայացրել ԱԳՆ-ին

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ

Սերժ Սարգսեանն ու Յովիկ Աբրահամեանն հանդիպել են ՀՀ արտաքին գործերի նախարարութեան կենտրոնական սպարատի եւ դիւանագիտական ներկայացուցչութիւնների ու հիւպատոսական հիմնարկների ղեկավարներին: Երկու ղեկավարները էլ խօսք է գնացել Հայաստանի արտաքին մարտահրաւէրներին եւ մասնաւորապէս տնտեսութիւն ներդրումներ ներգրաւելու մասին:

Յովիկ Աբրահամեանն, օրինակ, գեղեցիկ խօսքեր է ասել Հայաստանի բիզնեսի բարենպաստ պայմանների եւ հեռանկարների մասին, դիւանագէտներից ակնկալելով ակտիւ աշխատանք «երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ստեղծման, Հայաստանի միջազգային ներգրաւուածութեան ամրապնդման» հարցում:

Մի քանի օր առաջ Յովիկ Աբրահամեանն աւելի հակիրճ ու անկեղծ էր գտնուել՝ նա դժգոհութիւն էր յայտնել դիւանագիտական կորպուսից, այն կապակցութեամբ, որ «ներդրումներ չեն բերում»: Մի խօսքով, փող բերէք, ասել էր վարչապետը դիւանագիտական կորպուսին:

Այս «հանգրուանում» Սերժ Սարգսեանն ու Յովիկ Աբրահամ-

եանն ինչ որ առումով անկեղծ են՝ ԱԳՆ-ին մնացել է միայն փող բերելը: Հայաստանը տապալել է արտաքին քաղաքականութիւնը բոլոր ուղղութիւններով, եւ եթէ դիւանագէտներն այս գործն էլ գլուխ չբերեն, ԱԳՆ-ն կարելի է պարզապէս լուծարել:

Այսինքն, ԱԳՆ-ն գոնէ պէտք է ծառայի հայկական քրէա-օլիգարխիայի բարեկեցութեանը, որը եկել է իշխանութեան եւ փող է փնտռում, սեփական զրպանից չվճարելու համար:

Ներկայում Հայաստանը փաստացի որոշումների կայացումն ու արտաքին քաղաքականութիւնը յանձնել է Մոսկուային, իսկ ԱԳՆ-ն դարձել է ռուսական ԱԳՆ-ի կցորդը եւ միջազգային տարբերատեսանկերում Մոսկուայի համար կատարում է «լրացուցիչ ձայնի» եւ տեղեկատուութիւն «փոխանցելու» դեր: Ընդ որում, նոյնիսկ այս դերը գնալով նուազում է:

Այս պայմաններում անհասկանալի է, թէ որտեղից ու ինչպէս պէտք է դիւանագէտները փող բերեն: Հայաստանը աստիճանաբար յայտնուած է Ռուսաստանի իրաւաքաղաքական դաշտում եւ փաստացի ենթարկուած է միջազգային մեկուսացման, որը ենթադրում է նաեւ ֆինանսների ու տեխնոլոգիաների մուտքի արգելք: Ոչ ոք նման երկրում ներդրումներ չի

կատարի: Ինչ վերաբերում է պիւլուքի գործարարներին, նրանք վաղուց ներդրումներ չեն կատարում Հայաստանում, տնտեսական անբարենպաստ միջավայրի պայմաններում՝ կոռուպցիա, անկախ դատարանի բացակայութիւն, տարրական երաշխիքների բացակայութիւն եւ այլն:

Աւելորդ է նշել, թէ որ ղեկավարում Հայաստան մուտք կը գործեն ներդրումները եւ, որ աւելի կարելի է՝ տեխնոլոգիաները:

Առաջին եւ գլխաւոր նախապայմանը ինքնիշխանութիւնն է: Այնինչ, Հայաստանում ցանկացած ներդրում եւ տեխնոլոգիաներ իրականում ծառայելու են Ռուսաստանի շահերին, որը ներկայում ենթարկուած է միջազգային մեկուսացման ու շրջափակման, այդ թւում տեխնոլոգիական տեսակէտից:

Այսինքն, Ռուսաստանը յոյս ունէր Հայաստանը վերածել իւրաքայտուկ «օֆշորի» Արեւմուտքի հետ յարաբերութիւններում, նրա միջոցով մուտք ունենալով համապատասխան ֆինանսական եւ տեխնոլոգիական շրջանակներ: Սա Իհարկէ աշխատող տարբերակ կը լինէր, եթէ Ռուսաստանը չվարեր Հայաստանի տոտալ զաղութացման քաղաքականութիւն:

Այս պայմաններում, ինչ որ տեղ նոյնիսկ արդար չէ ԱԳՆ-ից պահանջել Հայաստանի արտաքին դրական իմիջ ձեւաւորել ու փող բերել: Աւելի նպատակայարմար է լուծարել այն, այդպէս գոնէ կարելի է անագին փող տնտեսել: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսականում չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը



### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Քառեակը Իշխանութիւններին Մինչեւ Աշուն Ժամանակ է Տալիս

Ազգային ժողովի ոչ իշխանական քառեակը 4 ժամ տեւած դռնփակ քննարկման ժամանակ որոշեց 12 առաջնահերթ պահանջներ ներկայացնել իշխանութիւններին եւ դրանք իրագործելու համար ժամանակ տալ մինչեւ աշուն:

Հիւրընկալող կողմը՝ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը նիստից յետոյ լրագրողներին հետ ձեւապարտութեամբ չհրապարակեց այդ 12 կէտերը, ասաց՝ դրանք կը հրապարակուեն առաջիկայ քառօրեայի օրերին, քառեակի բոլոր ուժերի համատեղ մամուլի ասուլիսում: Նա նշեց, որ այդ կէտերը վերաբերում են ներքին քաղաքականութեանը՝ գաղտնագրծելով միայն 100 տոկոս համամասնական ընտրակարգին անցնելու պահանջը:

«Դրանք կէտեր են, որոնք արմատական փոփոխութիւններ կը մտցնեն մեր պետութեան քաղաքական, տնտեսական, եւ ինչ-որ տեղ նաեւ բարոյական քննարկման կենտրոնը», - ասաց Յակոբեանը՝ յաւելելով, որ պահանջների մի մասը վերաբերում է կառավարութեանը, միւս մասը իշխանութեան միւս օղակներին:

«Կային կէտեր, որտեղ բանավէճ կար, իրար համոզելու անհրաժեշտութիւն կար, շատ առողջ քննարկում էր, բայց նաեւ պէտք է ասել, որ այս ընթացքում կարողացանք բոլորս ձեւակերպած փաստաթուղթ ընդունել», - ընդգծեց նա:

Հարցին, թէ ինչու՞ն է նիստում չեն քննարկուել արտաքին քաղաքականութեանը վերաբերող խնդիրները, մասնաւորապէս, Աստանայում տեղի ունեցած վերջին զարգացումներն ու Մաքսային միու-



«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեան

թեանը վերաբերող հարցեր, արդեօ՞ք դա նշանակում է, որ քառեակը գոհ է իշխանութիւնների արտաքին քաղաքական գծից, Յակոբեանը պատասխանեց. - «Ես չեմ կարծում, որ եթէ այդ հարցերը չենք քննարկել, նման ենթադրութիւններ կարելի է անել, որովհետեւ առանձին-առանձին չորս քաղաքական ուժերն իրենց գնահատականը տուել են թէ Աստանայի հանդիպման, թէ արտաքին դոկտրինի վերաբերեալ: Ուղղակի այսօր ժամանակի պատճառով չենք անդրադարձել արտաքին քաղաքական հարցերին: Բայց, բնականաբար, ամէն ինչ չի աւարտուում այս 12 կէտերով, մենք առաջիկայում կը քննարկենք շատ ու շատ հարցեր»:

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավարը նաեւ տեղեկացրեց, որ քառեակի 4 ուժերի առաջնորդների հանդիպման հարց չի քննարկուում, «բայց երբ որ անհրաժեշտ լինի, հանդիպումը կը լինի»:

## Արթուր Սաքունցը Հասարակութեանը Կոչ է Անում Ուղի Կանգնել

Պարզուում է, որ Ղազարխանյանի նախագահ Նազարբաեւն է Հայաստանում հանրային քննարկում անցկացնում, որովհետեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը միայն նրա յայտարարութեանն է պատասխանում: Այս մասին Եւրասիական տնտեսական միութեանն անդամակցելու վերաբերեալ հրաւիրուած հանրային քննարկման ժամանակ ասաց «Հէլսինքեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը:

«Մենք սեպտեմբերի երեքից այսքան խօսում ենք, սակայն Սերժ Սարգսեանը մեզ չի պատասխանում, իսկ հենց Նազարբաեւը մի բան ասաց, նախագահը եկաւ Հայաստան եւ արագ արձագանքեց: Ես ուրախ եմ նրա համար, որ իմացայ, որ Մալդան բառը դադարիւրդնում էլ կայ, սա շատ յուսադրող է», - ասաց նա:

Արթուր Սաքունցը համոզուած է, որ այս դէպքում Հայաստանում էլ իրավիճակը փոխելու համար պէտք է ոտքի կանգնի քաղաքացիական հասարակութեանը: «Մեզ մօտ այնպիսի վիճակ է, որ նոյնիսկ Անաստաս Միլկոյեանի արձանի տեղադրումն է հնարաւոր դառնում: Այստեղից էլ առաջանում է իրավիճակ, որտեղ հնարաւոր է՝ մարդկային գոհերից չխուսափենք, սակայն մենք չպէտք է այլախոհութեան հասնենք»:

Յիշեցնենք՝ Եւրասիական բարձրագոյն տնտեսական խորհր-



Հելսինքեան Ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց

դի Մալդանի 29-ին Աստանայում կայացած նիստի աւարտին Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազարխանյանի նախագահներ վաղիմիդ Պուտինը, Ալեքսանդր Լուկաշենկոն եւ Նուրսուլթան Նազարբաեւը Եւրասիական տնտեսական միութեան ստեղծման մասին պայմանագիր են ստորագրել: Նիստին ներկայ է գտնուել նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, ով առաջարկել է Հայաստանի՝ Եւրասիական միութեանը մինչեւ Յունիսի 15-ը միանալու հարցը քննարկման դնել: Ռուսաստանի նախագահ վաղիմիդ Պուտինն, իր հերթին, ամենակարճ ժամկէտներում Հայաստանի հետ փաստաթղթի ստորագրման անհրաժեշտութիւնն է ընդգծել:

## Գիւմրին վերածուում է «մահացող քաղաք»ի

Համադրելով ժողովրդագրական ցուցանիշները՝ փորձագետ Արտաշէս Բոյաջեանը պնդում է, որ Գիւմրիում այժմ բնակւում է 70-80 հազար մարդ: Պաշտօնական տուեալներով, մինչդեռ, այդ ցուցանիշը գրեթէ երկու անգամ աւելի է՝ 146 հազար:

Նրա խօսքով՝ եթէ արտագաղթի տեմպերը պահպանուեն, Գիւմրին կը վերածուի «մահացող քաղաքի»: - «Անընդհատ սկսում է բնակչութեան թիւը նուազել: Մի ժամանակ մենք խոշորագոյն քաղաք էինք, հիմա դառնում ենք խոշոր քաղաք, յետոյ՝ մեծ քաղաք, յետոյ՝ միջին քաղաք, փոքր քաղաք: Վերջին 25 տարուայ ընթացքում հետընթաց ենք ապրել: Փաստացի մեր քաղաքը ունի 70-80 հազար բնակիչ»:

Ռուսաստանի եւ Հայաստանի միգրացիոն ծառայութիւնների բանակցութիւնների արդիւնքում համաձայնութիւն է ձեռք բերուել, որ այսուհետ հայաստանցի միգրանտները Ռուսաստանում հաշուառուելու են ոչ թէ եօթ, այլ երեսուց օրուայ ընթացքում: Բացի այն, հայաստանցի միգրանտը ՌԴ-ում կարող է աշխատել առանց համապատասխան թոյլտուութեան: Բոյաջեանի ներկայացմամբ՝

մէկ անգամ երկրաշարժ տեսած Գիւմրիի համար սա կարող է լուրջ վտանգ դառնալ. - «Եթէ մարդը տեսաւ, որ այդտեղ աւելի լաւ են վճարում, ինքը միանգամից կը գնայ: Մեր մօտ պրոբլեմը այժմ աշխատատեղը չէ: Հիմա գլխաւոր պրոբլեմը մարդկանց ցածր եկամուտն է: Մարդ կար, որ աշխատանք ունի, բայց թողնում է աշխատանքը, գնում է Ռուսաստան, որովհետեւ այնտեղ աւելի շատ են վճարում»:

Մոսկուայում ձեռք բերուած համաձայնութիւնները շատերին են ոգեւորել, այդ թւում՝ Ռուսաստանի «սեւ ցուցակում» յայտնուածներին:

Հարցին, թէ ինչու է Հայաստանը շահագրգռուած արգելքի հարցի շուտափոյթ լուծմամբ, Արտաշէս Բոյաջեանը պատասխանեց. - «Քանի որ մեր երկրի տնտեսութիւնը տրանսֆերտային տնտեսութիւն է, կառավարութիւնը ի գործ է աշխատատեղեր ապահովել, գոնէ նախադրեալներ ստեղծել աշխատուժին աշխատանքով ապահովելու համար, բնականաբար, այդ պայմաններում նա շահագրգռուած է, որ աշխատուժը մեկնի արտագնայ, գոնէ սեզոնային աշխատանքի, որպէսզի սոցիալական լարուածութիւն չառաջանայ»:

## Բնապահպաներ. «Իշխանութիւնների Հետ Համագործակցելն Անիմաստ Եւ Անօգուտ է»

Շրջակայ միջավայրի պահպանութեան օրուան ընդառաջ «Յանուն մարդկային կայուն զարգացման» ՀԿ նախագահ Կարինէ Դանիէլեանը եւ Հայկական բնապահպանական ճակատի խորհրդի համակարգողներ Աննա Աղլամազեանը եւ Սիւզի Պետրոսեանը հրաւիրուած մամուլի ասուլիսին յայտարարեցին, թէ արժեքային լուրջ ճգնաժամը բերել է ճգնաժամի շատ տարբեր ոլորտներում, եւ բնութիւնն անմասն չի մնացել դրանից:



Բնապահպանութեան ակտիւիստները մամուլի ասուլիսի ընթացքին

«Սա մէկ օրուայ խնդիր չէ, եւ մէկ օրում չէ, որ դրանք առաջացել են: Մենք կտրուել ենք մեր հողից, ջրից, բնութիւնից եւ այդ կտրուած վիճակը բերել է նրան, որ մենք յանուն փողի սկսել ենք ոչնչացնել եւ մեզ գրկում ենք նրանից, ինչը մեզ անել է եւ հիմք է եղել մեր ինքնութեան ու մշակոյթի», - ասաց Աննա Աղլամազեանը:

Նա նշեց, թէ աղէտի մասշտաբների հասած «բնաքանդութիւնը» լուրջ վիճակում է:

«Մենք վաղուց բնապահպանութեան նախարարութեանն անուանել ենք «բնավերման» նախարարութիւն, քանի որ եղել են դէպքեր, երբ բազմաթիւ հաղորդագրութիւններ ենք տուել մի շարք դէպքերի մասին, երբ օրինակ պոչամբարը լցւում է Գեղի գետը, կամ այլ խախտումներ, սակայն ոչ մի արձագանք չի եղել դրա վերաբերեալ», - ասաց Աննա Աղլամազեանը՝ շարունակելով, թէ հարկային դաշտն այնպիսի վիճակում է, որ ցանկացած անտառային տա-

րած քում կարող են հանքարդիւնաբերութեամբ զբաղուել:

«Մենք փորձ ունենք, որ իշխանութիւններին հետ համագործակցելն անիմաստ եւ անօգուտ է, հետեւաբար այլեւս չենք էլ փորձելու համագործակցել», - ասաց նա: Միւս բանախօս Սիւզի Պետրոսեանը, ով եկել է Միացեալ Նահանգներից եւ Հայկական բնապահպանական ճակատի խորհրդի համակարգող անդամներից է, յայտարարեց, թէ որպէս սփիւռքի ներկայացուցիչ փորձում է այս խնդիրների մասին ձիւղ տեղեկութիւն տարածել:

«Սփիւռքում շարժում ունենք, որ կոչուում է «Հայկական վերածնունդ», տասը երկրներում մասնաձիւղեր ունենք, հեռուստաժամ կայ Լոս-Անջելեսում, որտեղ Հայաստանում առկայ բնապահպանական խնդիրները ներկայացոււմ են առանց ֆիլտրման», - ասաց Սիւզի Պետրոսեանը:

Բնապահպան կարինէ Դանիէլեանն էլ իր հերթին նշեց, թէ էկոլոգիական խնդիրը մի առանձին խնդիր չէ, դա համակարգային է, եւ այդտեղ նաեւ քաղաքականութիւն կայ:



ԼՈՒՐԵՐ

ԼՂՀ Նախագահը Հանդիպել է ԵԱՀԿ Գործող Նախագահի Հետ



Տեսարան մը հանդիպումից

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը Յու-նիսի 4-ին Երեւան քաղաքում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Շուեյցարիայի արտգործնախարար Դիդլիխ Բուրկհարտերի հետ:

Հանդիպմանը քննարկուել են ադրբեջանա-դարաբաղեան հակամարտության կարգաւորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին վերաբերող մի շարք հարցեր:

Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ հակամարտության կարգաւորման ամենամեծ խոչընդոտը հանդիսանում է պաշտօնական Բաքուի ռազմատենչ քաղաքականությունը, եւ կարեւորել է միջազգային հանրության կողմից համա-

պատասխան քայլերի ձեռնարկումը Ադրբեջանին դատապարտելու ու կառուցողական հուն բերելու ուղղութեամբ:

Միաժամանակ, երկրի ղեկավարը վերահաստատել է ադրբեջանա-դարաբաղեան հակամարտութիւնը բացառապէս խաղաղ ճանապարհով լուծելու պաշտօնական Ստեփանակերտի դիրքորոշումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցութիւններին լիարժէք ձեւաչափի վերականգնմամբ:

Հանդիպմանը մասնակցում էին արտգործնախարար Կարէն Միրզոբեկյանը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջէլ Կասպլիկը, պաշտօնատար այլ անձինք:

Հայաստանի Եւ ԵԱ-ի Յարաբերութիւնները «Դեռ Եւս Վերանայման Փուլում Են»

2013-ի Սեպտեմբերի 3-ից յետոյ Հայաստանի ու Եւրամիութեան յարաբերութիւնները դեռ Եւս գտնուում են վերանայման փուլում:

Լրագրողները հետ հանդիպմանը այս մասին ասաց Հայաստանում Եւրամիութեան պատուիրակության ղեկավար, դեսպան Տրեան Հրիսթեան՝ յաւելելով, որ վերանայումը ժամանակատար գործ է:

«Այս վերանայումը այնպիսի գործընթաց է, որը կարող է սկսուել այսօր եւ աւարտուել վաղը, որովհետեւ այս գործընթացում ներառուած են հայ գործընկերները, հայաստանեան իշխանութիւնները, հայաստանեան քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներին, Եւրամիութեան հաստատութիւնները եւ Եւրամիութեան 28 անդամ պետութիւնները: Հաշուի առնելով իւրաքանչիւր կողմի ներքին քննարկումները, ներքին քննարկումներից յետոյ կողմերի միջեւ քննարկումները՝ կարող են հասկանալ, որ սա շատ ժամանակատար գործընթաց է: Վերանայումը եւ քննարկումները ընթացքի մէջ են: Այն որոշ ժամանակ կը տեւի: Երբ արդիւնքները պարզ լինեն, արդէն կը քննարկենք ինչպէս իրականացնել վիճարկեան փութեթը», - ասաց դեսպանը:

Դեսպանը յաւելեց՝ չնայած ընթացող քննարկումներին Եւրամիութիւնը շարունակում է համա-

գործակցութիւնը Հայաստանի հետ, ինչպէս ինքն ասաց, «ոլորտային ուղղութիւններով, առանձին նախարարութիւնների հետ»:

Այն բանից յետոյ, երբ անցած Սեպտեմբերի 3-ին Մոսկուայում Վլադիմիր Պուտինին հետ բանակցութիւնների արդիւնքում նախագահ Սերժ Սարգսեանը անսպասելիօրէն յայտարարեց Մաքսային Միութեանը միանալու իր որոշման մասին, Հայաստանը, ինչպէս յայտնի է, ոչ միայն Նոյեմբերի վերջին Վիլնիւսում հրաժարուեց նախատորազրել Եւրամիութեան հետ շուրջ երեք ու կէս տարի բանակցած Ասոցացման համաձայնագիրը, այլեւ, փաստորէն, մինչ օրս Բրիւսելի հետ չի յտակցեր նոր յարաբերութիւնները, որոնք այլեւս չպէտք է հակասեն Մաքսային Միութեան առջեւ պաշտօնական Երեւանի ստանձնած պարտաւորութիւններին:

«Եւրոպական Միութիւնն ու Հայաստանը ունեն սերտ կապեր եւ վերահաստատում են իրենց յանձնառութիւնը աւելի զարգացնել եւ ամրապնդել Արեւելեան գործընկերութեան շրջանակներում փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցութիւնը», - կարդում ենք 2013-ի Նոյեմբերի 29-ին Վիլնիւսում Հայաստանի ու Եւրամիութեան ընդունած համատեղ յայտարարութիւնում:

Յովիկ Արրահամեանն Առաջարկել է, որ ՀՀ դեսպաններն զբաղուեն նաեւ ներդրումներով

ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանն կառավարութեան նիստին յանձնարարեց բոլոր նախարարներին մշակել ծրագիր եւ յանձնել այլ երկրներում լիազօրուած ՀՀ դեսպաններին՝ նրանց ներդրումային ծրագրերում ընդգրկելու համար:

Յովիկ Աբրահամեանը տեղեկացրեց, որ ներկայումս Հայաստանում են գտնուում բոլոր դեսպանները, որոնց ինքն հանդիպել է ու խօսել:

«Նրանք մեր ուշադրութիւնն են հրաւիրում երկու հարցի շուրջ: Ես առաջարկել եմ, որ դեսպանները զբաղուեն նաեւ ՀՀ-ում ներդրումներ ներգրաւելով, Նախագահն էլ է առաջարկել, որ դա դեսպանների աշխատանքի բաղադրիչ մասը հանդիսանայ: Դեսպաններն ասում են, նրանց առաջարկները պատշաճ ուշադրութեան չեն արժանանում նախարարների կողմից, եթէ արժանանում են, ապա դեսպանները դրանց մասին տեղեկացուած չեն լինում: Կոնկրետ փաստեր են

ասել», - ասաց նա եւ ընդգծեց, որ նախարարների աշխատակազմի դեկավարները պէտք է դեսպաններին տեղեկ պահեն նման դէպքերում:

Այնուհետեւ Յովիկ Աբրահամեանը նշեց, որ դեսպաններն իրենց բողոքն են արտայայտել այն հարցի շուրջ, չեն ստանում ներդրումային ծրագրերի առաջարկութիւններ նախարարութիւններից:

«Եթէ դեսպանը պէտք է հանդիպի տուեալ երկրի գործարարներին ու ներդրողներին հետ, ապա պէտք է ունենայ ծրագրեր, որպէսզի ներկայացնի դրանք ներդրողներին: Այստեղ համապատասխան նախարարներն ու նախարարութիւնները պէտք է մտածեն, որ տրամադրեն դեսպաններին լիարժէք ներդրումային ծրագրեր: Սրա միջոցով կարելի է դեսպաններին ներգրաւել այդ ծրագրերում, ինչը կ'ունենայ իր արդիւնքը: Պէտք է չստակ աշխատենք մեր դեսպանների հետ, ու դա կը տայ իր դրական արդիւնքը», - ասաց նա:

«Հայկական Վերածնունդ»-ը Փորձում է Մոբիլիզացնել Սփիւռքահայերի Ներուժը Կոռուպցիայի Դէմ Պայքարում

Ռեժիսորը պայքարի իր տարբերակն է ընտրել՝ կոռուպցիայի մասին ֆիլմ է նկարահանել՝ «Լուսաւորիչը», որն անցած շաբաթավերջին ցուցադրուեց Տորոնտոյում կազմակերպուած համաժողովում:

Կաշառակերութեան դէմ պայքարում սփիւռքի դերակատարութեանը նուիրուած հաւաքին ներկայ է եղել նաեւ ակտիւիստ Գարեգին Չուգասեանը:

«Ատոմ է գոեանը լինելով սփիւռքահայ, իր համար շատ կարեւոր է եղել ազգային ինքնութեան, էջ պատմական հայրենիքի գաղափարը: Հենց ինքը՝ Ատոմ է գոեանը, փաստորէն, նկատում է արդէն, իր ուշադրութիւնը բեւեռում է այսօրուայ Հայաստանի խնդիրների վրայ, որ մենք չենք կարող չնկատել այն հակասութիւնը, որը կայ մեր իտէլական պատկերացումների եւ այսօրուայ ցաւոտ իրականութեան միջեւ», - փոխանցեց Չուգասեանը:

Միայն մեր երազներում ապրող կատարեալ Հայաստան, եւ այն ինչ ունենք իրականում՝ կոռուպցիայի մէջ թաթախուած ու հայաթափուող երկիր. ա՜հ այս հակադրութիւնն է, ըստ Չուգասեանի, փորձել ներկայացնել է գոեանը: Ֆիլմում հակադրուած են համանման կոռուպցիոն իրավիճակներում յայտնու-

ուած հայի ու կանադացու կերպարները, որոնք որպէս խնդրի լուծում միանգամայն տարբեր ուղիներ են ընտրում:

«Հիմա արդէն հայրենիքի մասին մտածելու ժամանակ է», - ասում է Չուգասեանն ու յաւելում, որ առաջին անգամ «Հայկական Վերածնունդ» անունը կրող ու սփիւռքում արդէն երկու տարի գործող շարժումը որոշել է այսպիսի համաժողովների միջոցով Հայաստանի վիճակը ներկայացնել սփիւռքում եւ մոբիլիզացնել սփիւռքահայերի ներուժը կոռուպցիայի դէմ պայքարում:

«Ի վերջոյ այնպէս անել, որ սփիւռքահայերը մասնակցեն Հայաստանի ներկայիս խնդիրներին լուծմանը: Բազմաթիւ ձեւերով՝ Հայաստան տեղափոխուելը, մասնակցելը քաղաքացիական դիմադրութեանը, որը գոյութիւն ունի Հայաստանում, իրենց ռեսուրսներով մասնակցելը, մեղիական մասնակցութիւնը: Այսինքն ամէն կերպ տարածել այն յոռի երեւոյթների մասին տեղեկատուութիւն, որը գոյութիւն ունի: Ամսի 7-ին Մոնրէալում կը լինի երկրորդ համաժողովը եւ հետագայում կարծում եմ, որ այս ընթացքը կը շարունակուի այլ գաղութներում», - ասաց Չուգասեանը:

Ղարաբաղի Խնդիրը Պետք է Լուծուի

Շարունակուած էջ 1-էն

քարն ինքնորոշման իրաւունքի համար մղուող ազգային-ազատագրական պայքար է եւ չի կարող լինել լուծում, եթէ հաշուի չառնուի այս իրականութիւնը», - ըսաւ Սարգսեան:

Հայաստանի նախագահը անդրադարձաւ նաեւ հայ-թրքական յարաբերութիւններուն ու ըսաւ, որ Թուրքիոյ կողմէ Հայաստանի ապօրինի շրջափակումը պէտք է մնայ միջազգային բոլոր կառույցներում, որոնց շարքին՝ ԵԱՀԿ-ի ուշադրութեան կենտրոնը:

«Ես Չուրիցերիայի նախագահին յայտնեցի մեր ժողովրդի երախտագիտութիւնը Չուրիցերիայի օրէնսդիր մարմնի կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչե-

լու, համամարդկային արժէքներին նուիրուածութեան եւ դրանց խրախուսման գործում Չուրիցերիայի անկողնում յանձնառութեան համար: Արձանագրեցինք, որ Թուրքիայի կողմից չվաւերացուելու պատճառով մինչ օրս առկախուած են Չուրիցերիայի Համադաշնութեան միջնորդութեամբ կնքուած Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները: Բոլոր դէպքերում, մենք, իհարկէ, շնորհակալ ենք Չուրիցերիային այդ բարդ գործընթացի մէջ դերակատարութիւն ունենալու համար: Համոզուած եմ, որ Թուրքիայի կողմից Հայաստանի ապօրինի շրջափակումը պէտք է մնայ միջազգային բոլոր կառույցների, այդ թւում՝ ԵԱՀԿ ուշադրութեան կենտրոնում», շեշտեց նախագահ Սերժ Սարգսեան:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍԱԿՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



### ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ՝ 88.7 ԱՌ ԶԱՐԻԻՐՈՎ



Սուրբոյ Ազգային ժողովի նախագահ Մոհամմէտ Ժիհատ Լահասմ յայտարարեց, որ նախագահ Պաշար Ասատ վերընտրուած է Սուրբոյ նախագահ, ստանալով քուէներուն 88.7 առ հարիւրը: Լահասմի համաձայն, Ասատ ստացած է աւելի քան 10 միլիոն քուէ, իսկ անոր մրցակիցները միասնաբար հաւաքած են մօտ Ընտրութիւններուն, ըստ ընտրական յանձնախումբին մասնակցած են քուէարկելու իրաւունք ունեցողներուն 73.42 առ հարիւրը: Արդիւնքներուն հրապարակումէն ետք տնայնաբար ընտրութիւններ կազմակերպուեցան սուրիական զանազան շրջաններու մէջ, իսկ Պէյրութի Հարաւային արուարձաններուն մէջ լսուեցան կրակոցներու ձայներ: Դամասկոսի մօտ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Ռոպերթ Ֆորտ նշեց, որ Սուրբոյ մէջ տեղի ունեցած նախագահական ընտրութիւններուն միջոցաւ պատգամ մը փոխանցուած է աշխարհին, ըստ որուն «Ասատ կը մերժէ հրաժարիլ իր պաշտօնէն»: Իսկ Եւրոմիութիւնը սուրիական ընտրութիւնները համարեց ապօրինի եւ նախագահ Պաշար Ասատին կոչ ուղղեց լուրջ երկխօսութիւն կատարելու: ՄԱԿի մօտ Ռուսիոյ ներկայացուցիչ Վիթալի Զուրբին բացառեց, որ գերպետութիւններուն միջեւ փոխանակուած տեղի ունենայ Սուրբոյ եւ Ուքրանիոյ հարցերուն կապակցութեամբ: Իրանի արտաքին գործոց նախարարի օգնական Հսէյն Ամիր Ապտէլ Լահիան յայտարարեց, որ ընտրութիւններուն մեծածիւր քաղաքացիներու մասնակցութիւնը ցոյց կուտայ, որ ժողովրդավա-

րութիւնը յաղթանակած է: Ընտրութիւններու նախօրէին, Հալէպի զանազան շրջաններ ականատես դարձան արիւնալի պայթումներու եւ անդադար ուժեղացումի: Հրասանդներու եւ տեղական արտադրութեան ուժերու թիրախը դարձան մասնաւորաբար Նոր Գիւղ եւ Ազիզիէ հայաշատ թաղամասերը, ինչպէս նաեւ էշրէֆիէ շրջանը, ուր պայթումներուն հետեւանքով ինկան քանի մը զոհեր: Իսկ Նոր Գիւղի Զուարթնոց եկեղեցու եւ Կիլիկիա բնակարանային համալիրին մօտ ինկած ուժերը պատճառեցին նիւթական ծանր վնասներ ինչպէս նաեւ քանի մը հայ վիրաւորներ: Շրջանին մէջ բնակող քաղաքացիները ցնցում զգացին երէկ յետմիջօրէի ժամերուն: Տեղական լրատուամիջոցներուն եւ համացանցային խումբերուն համաձայն, ցնցումը արդիւնքն է մօտակայ Պոսթան Փաշա շրջանին մէջ փապուղիի մը պայթումին, որ թիրախ ընտրած էր իշխանութիւններուն տիրապետութեան տակ գտնուող կառուցմը: Իսկ Հոմսի մէջ պայթեցաւ ականուած ինքնաշարժ մը, որուն հետեւանքով մահացան 10 անձեր: Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ աղէտեալ գօտի յայտարարեց Նոր Գիւղը: «Պոչ կ'ուղղենք համայն հայութեան, որ բոլոր միջոցներով սատար հանդիսանայ ի նպաստ այս անմարդկային հրթիռարձակումներու անմիջական կասեցումին, յանուն աղէտահար ժողովուրդի ֆիզիքա կան անվտանգութեան ապահովումին», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

### ՔՆՆԱՐԿՈՒԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԵՒ ՅԵՏԱԳԱՅ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԶԱՐՑԵՐ



Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեան եւ Պէյրութի քաղաքապետութեան անդամ Արամ Մալեան

Պէյրութի քաղաքապետութեան անդամ, Հայկական Կրթական Բարեփոխական Միութեան ատենապետ Արամ Մալեան Երեւանի մէջ տեսակցեցաւ Հայաստանի մայրաքաղաքի քաղաքապետ Տարօն Մարգարեանին հետ, քննարկելու համար երկկողմանի համագործակցութիւնը եւ զանազան թղթածրարներ: Մարգարեան կարեւորեց Պէյրութի քաղաքապետութեան հետ համագործակցութեան սերտացումն ու խորացումը, նաեւ աշխատանքները: «Վստահ եմ, որ Երեւանը եւ Պէյրութը համագործակցութեան լայն հնարաւորութիւններ եւ հեռանկար ունին ինչպէս քաղաքային տնտեսական, նոյնպէս կառավարման հարցին մէջ փորձառութեան փոխանակումի առումով», ըսաւ քաղաքապետը: Մալ-

եան իր կարգին կարեւորեց Պէյրութի հայութեան ներդրումը լիբանանեան կեանքին մէջ եւ համոզում յայտնեց, որ յառաջիկային Երեւանի եւ Պէյրութի միջեւ յարաբերութիւններն աւելի սերտ եւ գործնական պիտի դառնան: «Համագործակցութիւնը շատ կարեւոր է, յատկապէս քաղաքային տնտեսութեան որոշ մարզերուն մէջ նկատուող համանման խնդիրներուն շուրջ լուծումներ գտնելու համար: Ես համոզուած եմ, որ Երեւանն ու Պէյրութը իսկապէս ունին համատեղ ծրագրեր իրականացնելու մեծ ներուժ», ըսաւ Մալեան: Ան Մարգարեանին փոխանցեց Պէյրութի քաղաքապետ Պիլալ Համատի պաշտօնական հրաւերը՝ Պէյրութ այցելելու եւ համագործակցութիւնը սերտացնելու ուղղութեամբ յաւելեալ քայլերու ձեռնարկելու համար:

Լածաբանութեան եւ արեւելեան հոգեկանութեան մարզերու մէջ, այնուհետեւ՝ 1973-ին իմաստասիրութեան դոկտորական տիտղոսը ստացած է Պոլսոյ պետական համալսարանէն՝ աւարտածուի նիւթ ունենալով «Սուրբ Օգոստինոսն ու իր հոգեկանութեան սկզբունքը ճանաչողութեան տեսութեան մէջ եւ ինքնաճանաչումը» (առաջինը Թուրքիոյ պարագային): Հայ համայնքի միջնակարգ եւ երկրորդական վարժարաններու, ինչպէս նաեւ Պոլսոյ իտալական լիսէին մէջ դասաւանդած է: 1974-ին վենետիկ վերադառնալով՝ Միաբանութեան ժառանգաւորաց ու Մուրատ-Ռափայէլեան վարժարաններու ուսուցիչի, աւելի ուշ՝ 1982-1985 տարիներուն տեսուչի պաշտօն վարած է: Մինչեւ 2011 թուականը վարած է վենետիկի «Քա Ֆոսքարի» Համալսարանի հայագիտական իր

իսկ կողմէ 1976-ին հիմնուած կաճառը, որ աւելի ուշ գլխաւոր լեզուի քառամեայ ուսուցման առարկայի վերածուած է: Ներկայիս՝ Հոռոմի Արեւելեան Հայրապետական Համալսարանի Աստուածաբանութեան եւ Հայ Եկեղեցուոյ Հոգեկանութեան դասախօս է, ինչպէս նաեւ Արեւելեան Եկեղեցիներու Միաբանութեան Մերձաւոր Քրիստոնեայ Արեւելքի Ուսմանց Կեդրոնի յատուկ յանձնաժողովի խորհրդական է: Բազմաթիւ գիտական հրատարակութիւններու հեղինակ, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի ու Oasis Հիմնարկի գիտական խորհուրդի անդամ է: Հիմնադիր անդամ է նաեւ վենետիկի Հայ Մշակուցի Ուսումնասիրութեան եւ վաւերագրումի կեդրոնին: Դիւան՝ վենետիկի Հայ Մշակուցի Ուսումնասիրութեան եւ վաւերագրումի կեդրոնի վաւերագրումի կեդրոնի

### ՀԱՅՐ ԼԵՒՈՆ ԶԵՔԻԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ ԿՈՂՄԵ

Վենետիկի Պատրիարքութեան պալատէն լուրը հաղորդուեցաւ Հ. Լեւոն Զէքիեանի Պոլսոյ ու Թուրքիոյ Հայ Կաթողիկէ համայնքի Արքեպիսկոպոս նշանակուելուն՝ Փրանկիսկոս Պապին կողմէ: Պոլսոյ Լեւոն Զէքիեան ծնած է Պոլիս՝ 1943 թուականին: 1955-էն յաճախած է Սուրբ Ղազարու Միսիթարեան մայրավանքի նորընծայարանը՝ աւարտելով աւելի ուշ իմաստասիրութեան (1962) ու Աստուածաբանութեան (1966) Հոռոմի Պապական Գրիգորեան Համալսարանը: 1967-ին Սուրբ Ղազարու մէջ վարդապետ ձեռնադրուած է Գերապայծառ կարապետ



Ամատուկի ձեռամբ: Մասնագիտացած է աստ-

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680**



### ԱՐԵԱՆ ՀՈՏՆ ԱՌԱԾ ԳՈՐՇ ԳԱՅԼԻՆ ԴԺՈՒԱՐ Է ՅԵՌՈՒ ՔՇԵԼ

#### ՍԱՄՈՒՔԼ ԿՈՍԵԱՆ

Ուկրաինացի դէպքերը, մի տեսակ, շեղել են միջազգային հանրութեան ուշադրութիւնը Սիրիայից, որտեղ ոչ միայն չի հանդարտուել կառավարական ուժերի եւ ապստամբների հակամարտութիւնը, այլեւ ամէն օր առաւել հակամարտկային դրսեւորումներ են արձանագրուում, աւերակների վերածելով քաղաքներն ու բնակավայրերը, եւ ամենացաւալին, գոհների թիւն է աւելանում: Միաժամանակ շարունակում է օրաօրուի մնալ Քեսապի ճակատագիրը: Թէեւ Թուրքիայի արտգործնախարար Դաւութօղլին շարունակում է ժխտել Թուրքիայի մասնակցութիւնը քեսապեան իրադարձութիւններին, սակայն, ինչպէս նշուած է սիրիահայերի ֆէյսպուքեան էջերում տարածուած Բերիոյ թեմի լրատուական գրասենեակի հաղորդագրութեան մէջ.

«Քեսապում իւրաքանչիւրը կարող է հաստատել, որ զինեալները հայաբնակ աւան են մտել Թուրքական կողմի յստակ օժանդակութեան արդիւնքում»: Ապա հարդորուում է նաեւ, որ «Եթէ Թուրքական միջամտութիւնը չլինէր, բանակն արդէն ետ մղած կը լինէր ներխուժողներին, որովհետեւ առաջին անգամ կարողացել էր բաւական ետ մղել նրանց»: Տեղացիների վկայութեամբ՝ զինեալները միայն Թուրքական միջամտութեան շնորհիւ կարողացան առաջընթաց արձանագրել: Եթէ սիրիական իրադարձութիւնները պայմանաւորուած են Ասատի ռեժիմի դէմ պայքարով, ապա քաղաքական չմշակուած վայրիվերումները կարծես կապ չունեն քաղաքականութիւնից հեռու Քեսապի հետ: Սակայն հարցի պատասխանը ոչ թէ Քեսապում, այլ նրա ողբերգութեան շառաւիղից դուրս պիտի փնտռել: Մի բան անաւարկելի է՝ Քեսապը 15 թուականի մանրակերտն է չիւնցնում, եւ, ուրեմն, փորձագէտ պէտք է՝ ճանաչելու հեղինակի ձեռագիրը:

Միակ տարբերութիւնը, որ Թուրքիան փորձում է չէզոք, աւելին, հայանպաստ ներկայանալ, բռնի Թուրքիայի տարածք տեղափոխելով մի քանի անպաշտպան ծերերի, որոնք յաջողեցին ազատուել Թուրքական «օգնութիւնից» եւ վերջապէս Լիբանանի իրենց հայրենակիցներին են հիւրընկալուել: Իհարկէ, քեսապցիները յոյսը չեն կորուսում,


որ վերադառնալու են, միայն յայտնի է՝ երբ, քանի որ Արեւմուտքը շարունակում է «ժողովրդավարութեան» պիտակով իր օգնութիւնը տրամադրել ապստամբներին, թէեւ վաղուց է յայտնի, որ Սիրիայում ընդդիմադիրների հանդերձանքով, ամէն տիպի ահաբեկչական եւ իսլամիստական խմբաւորումներ իրենց հարցերն են լուծում՝ թքած ունենալով Ասատի էլ, Արեւմուտքի էլ, ժողովրդավարութեան վրայ էլ:

Արդիւնքում՝ հարիւրաւոր անմեղ գոհեր, որոնց մէջ գնալով հայերի թիւը բազմապատկուած է: Սիրիան դարձել է շահերի բախման հերթական հարթակը, եւ Թուրքիան, որ միշտ հզօրների ստուերի տակ թաքնուելով փորձում է իր բաժինը փախցնել, հազիւ թէ ուզի սիրիական առուփախից անմասն մնալ: Մեծ հաշուով տանուլ տալուց յետոյ, ինքնամիթարութեան միակ հնարաւորութիւնը Քեսապն էր, որը ե՛ւ տարածք էր, ե՛ւ հայերի դէմ հերթական ոտնձգութիւն: Եւ այժմ դժուար է կանխագուշակել, թէ ինչպէս է հնարաւոր Թուրքերին հեռացնել այդ տարածքից: Կիպրոսի հիւսիսային հատուածը օկուպացիայի իրական վկայութիւնն է: Թուրքիան նոյնիսկ հրաժարուում է Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի վճռի կատարումը մից, որով դատարանը պարտադրում է 90 միլիոն փոխհատուցում վճարել Կիպրոսին: Արդարացումը մէկն է՝ որոշումը կարող է խանգարել յոյների հետ երկխօսութեանը, այնպէս, ինչպէս հայ-թուրքական օրապակաս արձանագրութիւններն են շահարկուած:

Վերջերս Վրաստանում Վրաստանի, Թուրքիայի եւ Ատրպէյճանի նախագահների եռակողմ հանդիպումից յետոյ Թուրքիայի նախագահը յայտարարեց. «Մեր դիրքորոշման հիմքում տարածքային ամբողջականութեան անձեռնմխելիութիւնն ու պաշտպանութիւնն է»: Ապա անդրադառնալով Ուկրաինացի իրադարձութիւններին՝ նշեց, որ այդ երկրի ճգնաժամը բացասաբար է անդրադառնում ողջ տարածաշրջանի կայունութեան վրայ, այդ պատճառով պէտք է ստեղծուած դրութիւնից դուրս գալու ճանապարհ գտնել՝ հաշուի առնելով միջազգային ստանդարտները եւ Ուկրաինացի տարածքային ամբողջականութիւնը: Շատերն են համակարծիք, որ Թուրքիային

### ՍԵՒԱՆ ՆՇԱՆԵԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՆՈՐ ԿՈՉ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ

»Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին« միջազգային յանձնախումբի անդամները, Թուրքիոյ մէջ բանտարկուած հայ լեզուաբանը ազատ արձակելու նպատակով՝ իրաւապաշտպան կազմակերպութիւններուն անյապաղ գործի անցնելու կոչ ըրած են Երեքշաբթի, Յունիս 3-ին:



Կազմակերպութեան անդամներուն տարածած հաղորդագրութեան մէջ կը նշուի, թէ «Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» միջազգային յանձնախումբին շուրջ միաւորուած են մեծ թիւով մտաւորականներ եւ տարբեր քաղաքացիական կազմակերպութիւններու անդամներ՝ հաշուի առնելով Նշանեանի բանտային պայմաններու անընդունելիութիւնը, անոնց աստիճանական վատթարացումը եւ Նշանեանի դէմ նոր դատերու սպառնալիքները:

Յանձնախումբի անդամները Նշանեանի դէմ արձակուած դատական վճիռը «թրքական արդարադատութեան նկատմամբ ծաղրանք» որակած են՝ գայն անընդունելի նկատելով:

»Յանձնախումբը Նշանեանի բանտարկութիւնը կը նկատէ իբրեւ ատելութեան եւ խտրականութեան բացայայտ դրսեւորում: Նշանեան, ըլլալով Թուրքիոյ, այսպէս կոչուած՝ պետական թէզերուն հետ հաշուի չնստող մտաւորական՝ նման

բռնութիւններու կ'ենթարկուի: «Ազատութիւն եւ արդարութիւն Սեւան Նշանեանին» միջազգային յանձնախումբը Թուրքիոյ իշխանութիւններուն կոչ կ'ընէ անմիջապէս ազատ արձակելու Նշանեանը եւ վերջ տալու անոր դէմ շարունակուող ճնշումներուն եւ բռնութեանց: Սեւան Նշանեանի նկատմամբ կիրառուող ճնշումները եւ գրկանքները քննադատելու եւ Սեւանը ազատ արձակելու համար, յանձնախումբը կոչ կ'ընէ համաշխարհային հանրութեան, միջազգային եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններուն, որ անմիջապէս գործի անցնին», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Յանձնախումբին անդամները նաեւ իրենց մտահոգութիւնը յայտնած են հայ լեզուաբանին առողջական վիճակին եւ ապագային կապակցութեամբ:

Նշանեան 2013-ի Դեկտեմբեր 12-ին դատապարտուեցաւ երկու տարուան բանտարկութեան, իբրեւ թէ իր հողամասին վրայ ապօրինի կառուց մը շինելուն համար:

այլեւս վաղուց չի յաջողում լուսաքօղարկել իր գործի եւ խօսքի հակասութիւնը: Քեսապը թարմ վերքի պէս շարունակում է արիւնել:

Արիւնում է ամբողջ Սիրիան, եւ Թուրքիան զիշատիչի պէս սպասում է, թէ երբ է արնաբամ լինելու, որպէսզի յաջողեցնի տարածքի հերթական իր պատառը պոկել: Թէեւ ժամանակները փոխուել են, Թուրքիան շարունակում է հին երգերը որպէս ժամանակակից ներկայացնել: Բայց հենց Թուրքիայի ներսում լսողների թիւը ամառուայ գետի պէս նուազում է, եւ պէտք է, որ տարածքային ամբողջականութիւն յորջորջողը ուրիշի տարածքների վրայ աչք զցելով փորձի մեծացնել լսարանը: Յունիսի 3-ին

Սիրիայում նախագահական ընտրութիւններ են: Առայժմ դժուար է պատկերացնել այդ ընտրութիւնների անցկացման ընթացքը: Հնարաւոր է՝ պայթող ուժերի ու սկանների թիւը ընտրողների թուին գերազանցի: Ակնյայտ է՝ ապստամբ կոչուածներն ու իսլամիստական հազար ու մի խմբաւորումներ փորձելու են ամէն գնով բոյկոտել ու տապալել ոչ միայն ընտրութիւնները, այլեւ սիրիացիների յոյսը, թէ երբեւիցէ հնարաւոր է՝ խաղաղութիւնն իրենց երկիր վերադառնայ: Եւ պէտք է կասկածել, որ Թուրքիան սաղրանքների համահեղինակներից է լինելու, որովհետեւ արեան հոտն առած գործ գայլին դժուար է հեռու քշել:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աձիրաճեղս է

*Coverage & Protection should be on the top of your priority list.*

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



# ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՆՈՒԱՐԴ ՄԱՏՈՅԵԱՆ - ՏԱՐԱԳՃԵԱՆ

Ո՞վ կրնայ ընկճել ժողովուրդ մը, որ դարեր շարունակ իր հայրենի հողին վրայ մղեց իր գոյութեան կռիւը, նուաճեց իր ապրելու եւ գոյատեւելու իրաւունքը, իր լինել չլինելու հարցին պատասխանեց՝ լինել:

Ժողովուրդ մը, որ անցած է գոյապայքարի երկար ուղիներով, իր արեամբ եւ ուղեղի բոլոր թելերով միշտ կապուած մնաց իր պատմութեան:

Ո՞րքան ժամանակ սուտն ու կեղծիքը կրնան դիմանալ քողարկելով պատմական ճշմարտութիւնը, խեղաթիւրելով անցեալի դէպքերն ու իրողութիւնները, վաւերական փաստերու եւ վկայութիւններու սիրտը լոյսին տակ:

Երբ այսօր՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակն է դրան առաջ, կու գայ պահանջատէրի իրաւունքով հայ ժողովուրդին բռնագրաւուած իրաւունքներուն արդար հատուցումը պահանջելու:

Մինչեւ ե՞րբ Միջազգային համայնքը խուլ պիտի ձեւանայ, պիտի մնայ անտարբեր, առանց անդադաւնալու, թէ երկար կեանք չունին խարդաւանքն ու խեղաթիւրումը:

Ժամանակն է բաց աչքերով տեսնել ճշմարիտ իրականութիւնը՝ ուր պատմութեան էջերը արձանագրած են անցնող դարաշրջանի պատմական դէպքերն ու եղելութիւնները ապացուցելով, թէ Սուլթանական թուրքիոյ եւ երիտթուրքերու ջարդարարական քաղաքականութեան հիման վրայ գործադրուեցաւ Արեւմտահայութեան բնաջնջման ծրագիրը:

Այո, պատմութիւն է եւ իրականութիւն 1915թ-ի հայ ժողովուրդի սպանը: Այն ճշմարիտ իրականութիւնն է, որ կը հաստատեն այդ օրերու պատմական անհերքելի իրողութիւններն ու իրադարձութիւնները:

Թէ ի՞նչ անդրադարձ ունեցաւ 1878թ. Պեդլիհի վեհաժողովը:

Ի՞նչ արժեք Պեդլիհի վեհաժողովին արձարծուած բարենորոգութիւններու ծրագիրը հայերուն համար, երբ այդ օրը հայկական հարցը Միջազգային բնոյթ կը ստանար:

Պատասխանը պարզ է ու յստակ: Սուլթանական կառավարութիւնը ոչ միայն դրժեց բարենորոգումներ կատարելու իր խոստումը, այլ առաւել սաստկացուց իր գործադրած ազգային եւ կրօնական հալածանքները: 1876թ.-ի Սահմանադրութեան յոսիւրով ներշնչուած հայերը, մեծ յուսախաբուութիւն ապրեցան:

Այդ մասին թող խօսին երիտթուրքերու դատավարութեան փաստաթուղթերը թուրք պետական գործիչներն ու դէպքերուն ականատես վկաները:

Ինչպէս՝ նոյն թուականին Օսմանեան կայսրութեան մեծ վեզիր Քիւսուի Փաշայի հետեւեալ առ յայտարարութիւնը, - թէ՛ «հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճէտ ընելու ենք: Եւ այդ մէկը գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզի. ամէն գործիք պատրաստ ունինք՝ քուրտ, չէրքէզ, կոստակալ, դատաւոր, հարկահան, նոսրիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնա-



կան պատերազմ մը կը հրապարակենք եւ դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ոչ ոք զէնք ունի, ոչ զինուորականութիւն եւ ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զէնք ալ ունինք, զինուորութիւն ալ, աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան - Ա.Փ.) եւ ամէնէն հարուստը զինակից է մեզի եւ մեր Ասիական աշխարհին երաշխաւոր»:

«Եւ եթէ այդ հայ ազգը բնաջնջը ըլլայ եւ քրիստոնեայ եւրոպան կրօնակից մը փնտրէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, մեզ հանգիստ կը թողու եւ այն ատեն կը զբաղինք գործերով եւ բարեկարգութեամբ»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 7)

Եւ այդպէս Քիւսուի Փաշայի այս մտայղացումը իրօք կը դառնայ արեւմտահայութեան բնաջնջման թուրք քաղաքականութեան առանցքը:

Այդ մասին թուրք քաղաքական գործիչ Օսման Նուրի նոյնպէս կը վկայէ, - թէ՛ «Խիստ հակողութեան տակ առնուեցան հայ պաշտօնեաները եւ հայկական հրատարակութիւնները: Այդ պահէն սովորական երեւոյթ դարձաւ աքսորը: Կուսակալներու կողմէ քննութեան ենթարկուեցան հայոց եկեղեցիներու եւ դպրոցներու մասին տրուած հրովարտակները: Վերջին տարիներու ընթացքին փակուեցան այն հայկական դպրոցները, որոնք բացուած էին ոչ թէ հրովարտակով, այլ միայն կառավարութեան թոյլատրութեամբ: Խստութիւններ ու բռնութիւններ գործադրուեցան նաեւ հարկերու գանձման հարցով»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 7)

Նոյն օրերուն հրահանգ տրուեցաւ մամուլի գրաքննչական վարչութեան՝ արգիլել «Հայաստան» բառի, հայ ժողովուրդի պատմութեան եւ աշխարհագրութեան վերաբերող անուններու յիշատակումը:

Այսպիսով դաժան ճակատագիր մը կը սպասէր արեւմտահայութեան: Թուրք քաղաքականութեան հետեւանքով հայ ժողովուրդը կը գտնուէր ոչնչացման վտանգին առջեւ:

Երբ յետագայ տարիներուն Ապտուլհամիտի գործը շարունակելու կուզան երիտթուրքերը, «Միութիւն եւ Յաւանք» թերթը կուսակցութեան ղեկավարները: Անոնք Համիտեան բռնապետութիւնը տապալելով, թուրք ժողովուրդներուն կը ներշնչեն այն

միտքը, որ 1876թ. Սահմանադրութեան վերահաստատումով պիտի վերանայ ազգային խտրութիւնը, եւ բոլոր հպատակ ազգերը հաւասար պիտի ըլլան օրէնքի առջեւ: Բայց երիտթուրքերը շուտով մոռցան իրենց տուած խոստումները, գործադրեցին հայոց բնաջնջման ծրագիրը:

Որ տեղահանութիւնն ու կոտորածը կը կատարուէին կանխամտածուած ծրագիրով, այդ մասին կը հաստատեն երիտթուրքական գործիչներէն՝ Մելլան Չատէ Ռիֆաթի հետեւեալ փաստարկները. -

«Միութիւն եւ Յաւանք» թերթը կուսակցութիւնը որոշում կայացուց՝ ոչ մէկ մարդ կենդանի մնալու պայմանով սպանել եւ ոչնչացնել հայերը: Այս հրամանը իրականացնելու համար նախագահութիւնը ստեղծեց Պէշահատին Շաքիր, դոկտ. Նազըմ, եւ հանրակրթական նախարարը Շիւքրի Պէշեքէն կազմուած Յանձնաժողով՝ տալով «Երեքի գործադիր կոմիտէ անուանումը: Այս երեքի գործադիր կոմիտէն «թէշքիլաթը մահատուէ» անուան տակ սկսաւ բանտերէն հաւաքագրել քրէական յանցագործներուն եւ ստեղծել չեթեներու հրոսակներ: «Թէշքիլաթը մահատուէ» պիտակի տակ ստեղծուած այս չեթեներու կատարած յանցագործութիւններն ու բռնութիւնները, արատաւորեցին թուրք ժողովուրդը աշխարհի հասարակութեան առջեւ, արիւնալի եւ բարբարոսական էջեր արձանագրելով անոր պատմութեան մէջ»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 10)

«Ամենուրէք սկսան հաւաքել հայերը. - կ'ըսէ Մելլան Չատէ Ռիֆաթ, նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներուն, ծերերուն եւ երեխաներուն: Անոնք որոնք կ'ընդունէին մահմետականութիւնը, ժամանակաւորապէս դուրս կը հանէին քարաւաններէն, իսկ միւսները խուճերով, ժանդարմաներու հսկողութեան ներքոյ կ'ուղարկէին նախատեսուած ճանապարհներով»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 5)

Այնուհետեւ այդ անգէն ու անպաշտպան քարաւանները մարդկանց տեսողութիւնէն հեռու, ամառի վայրերու մէջ կ'ենթարկուէին հայերու բնաջնջման նպատակով ստեղծուած «թէշքիլաթ» մահատուէի, հրոսակախուժերու շարձակման»:

Երիտթուրքերու քաղաքական ուղեգիծը կը հետապնդէր նաեւ հայերը մահմետականացնելու ծրագիրը: Այդ աշխատանքը կը տարուէր տեղահանութեան եւ կոտորածներու ընթացքին: Ինչպէս՝ Սուրիա տարագրուածներուն մասին Ֆայիհ Ռեֆքը Աթայը կը վկայէ.

«Չբեքներու, քիւրտերու եւ միւսներուն նման Հայերու արտաքսումը տեղի ունեցաւ դէպի Սուրիոյ խորքերը: Նոյնիսկ յանձնաժողով մը կազմուեցաւ, որպէսզի հայերուն եւ՝ տուն եւ՝ հող տրամադրուի՝ մահմետական դառնալու պայմանով» («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 11)

1967ին, «Հայաստան» Պետական Հրատարակչութիւնը բաց ափի մը ծաւալով, գրքոյկ մը լոյս կ'ընծայէր՝ «Արմատ եւ Խութիւն» խորագիրով, որուն 120 էջերով հանրութեան կը հրամցուէին 57 բանաստեղծութիւններ՝ Մ. Ղրտեանի եւ Վահագն Դաւթեանի թարգմանութեամբ հայացուած: Հեղինակը՝ Ալիսիա Կիրակոսեան անծանօթ անուն մըն էր հայկական գրական շրջանակներուն մէջ: Բայց մէկ օրէն միւսը, այս գրքոյկով, ոչ միայն հանրածանօթ այլ նաեւ սիրելի, փնտուռած անուն մը դարձաւ ան. կեանքի, սիրոյ գուլալ, թարմագեղ կարկաչն էր որ կը բղխէր աշխարհի մէկ հեռաւոր, չսպասուած անկիւնէն՝ Արժանթինէն: Սպաներէն կը գէշըր Ալիսիան, բայց իր երգերը Վահագն Դաւթեանի հրաշալի թարգմանութեամբ այնքան հարազատ կը հնչէին հայ գրասէր զանգուածներու ունկերուն որ մոռցուեցաւ թարգմանութեան արգելախիչ ու երեւոյթը եւ տառով ու հոգիով հայ նոր բանաստեղծահի հռչակուեցաւ եւ որդեգրուեցաւ ան: Գաղտնիքը այս յաջողութեան՝ Ալիսիային բանաստեղծական վճիտ ակունքներն էին, յուզական իր հարուստ ներաշխարհին նոր թրթռացումներն ու զանտնք մեզի փոխանցող արդիական արագ, շքեղ ու շուալ պատկերներն ու ոճը՝ ուր զգացում եւ մտածում հեզասահ թարմագեղութեամբ կ'առնէին ընթերցողը:



քով հնչեցուց նաեւ հայրենասիրական եւ մարդասիրական լարերն ալ՝ տիեզերախուզական խորութիւններու առընթեր:

Ահա այդ լարերուն լաւագոյն թրթռացումներն են, որ այսօր կը հրամցուին մեզի բացմակողմանի միջոցառումներով՝ ընթերցանութեան բարիքներով եւ տեսուկորութեան կախարդանքով կենսաւորուած: Բառին իսկական առումով՝ հոգեկան եւ իմացական ապրումներու եւ խոհերու միախառնուած վայելք մը՝ արդի բանաստեղծութեան բոլոր շնորհներուն ճարտար գործադրութեամբ յազեցած:

«Խաղաղութիւն Քուանտային» խորագիրին տակ մէկտեղուած են ոչ թէ պարագայական անուանակոչութեամբ, այլ իմաստի եւ բովանդակութեան հուլանքով միասնութիւն մը կազմած հատընտիր քերթուածներ Ալիսիային նախորդ բոլոր գործերէն, քանի մը անտիպնետրու յաւելուածով ճոխացած:

Խաղաղութեան, արդարութեան եւ խոր մարդկայնութեան ներբողանք մըն է այս հատորը, կոչ ու ճիշ մը՝ ահագանգային ուժգնութեամբ հնչեցուած՝ վասն մարդուն վերամարդկայնացման: Մեկնակէտը Ալիսիային տաղանայն է եւ կեցուածքը, պատերազմներուն գործած ահաւոր աւերներուն, մարդկութեան հետզհետէ նիւթապաշտութեան տուած կարեւորութեան, անարդարութիւններուն եւ մայր բնութեան սանձարձակ աւերումին եւ եղծանումին: Իր մօտեցումը այս հարցերուն ունի տիեզերականի չափանիշն ու գիտական բացատրութիւնը գոր կոչած է «Քուանտա»-quantum գիտական յորջորջումով: Հասկնալու համար այս մեկնադէտը հարկ է նախ լսել զինք. «Չկայ խաղաղութիւն առանց ներուժի: Երկունս էլ անհրաժեշտ են, որպէսզի տիեզերքի Գերագոյն Արդարութիւնը բուժի մեր վէճքերը եւ ստեղծի այն երջանկութիւնը, որին արժանի ենք: ... Ընթացքը հետեւեալն է. երբ մենք յուզումներ ունենք, մեր մարմնի բջիջները ազդուում են, եւ կենսահիւլէական փոփոխութիւն է տեղի ունենում: Այդ զգացումները ինքնաբերաբար արձակուում են դէպի ուրիշները, որոնք ազդուում են ընդհիւլէական մակարդակով: Ինչ որ փոփոխութիւն է տեղի ունենում: Այս փոփոխութիւնը հնչում է Քուանտային մակարդակի վրայ: ուրեմն, որոշ չափով, մենք փոխուելով՝ ստեղծում ենք մի ուժ, որ առաջ է բերում շղթայական հակազդեցութիւն: Այդ մեր «նոր ես»-ի ուժը կապուած է ուրիշների «նոր ես»

Յիշեցման կարգով տանք պատահական նմոյշ մը միայն:  
Ես վախեցում եմ «սէր» բառը ասել, Զի նախագգում եմ, Որ սիրուց անդին ամայութիւն է... Ես վախեցում եմ, որ սէրը միայն Բառ լինի, Որ ես ճաշակեմ բառն այդ Եւ քաղցած մնամ: Ու ես ինքս օգնում եմ հիմա, Որ այս աշխարհում պահպանեմ սէրը, Որ ամենքիցն է Ու իմն է միայն Եւ դա համարեա՛ այն միակ բանն է, Որ իմն է միայն: Ես վախեցում եմ դարձեալ ու դարձեալ, Որ սէրն աշխարհում ամէն ինչ լինի, Որ սէրն աշխարհում չլինի ոչինչ... Պարզ պրպտումով տեղեկացանք թէ երիտասարդ բանաստեղծուհին արդէն սպանալեզու քերթողութեան մէջ գրաւած էր փայլուն դիրք ու հռչակ եւ արժանացած կարեւոր գրական մրցանակներու, եւ մանաւանդ՝ մեծահամբաւ Փիքասոյի նկարագրողութեամբ քերթողագիրք ունէր: Առաւել էւս՝ «գերտարածական» կոչուած բանաստեղծական նոր յղացքի, ըմբռնումի եւ ձեւակերպումի դպրոց-տեսութեան հեղինակուհին էր: Անշուշտ հպարտութիւն պատճառող այլ տուեա՛լներ ալ՝ ասոնք:  
«Խաղաղութիւն Քուանտային» Անցաւ ժամանակ, Ալիսիան տիրացաւ նաեւ հայերէն լեզուին եւ սկսաւ գրել մայրենի լեզուով եւ սիրոյ իր ջերմ ու քնքուշ երգերուն



### ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ԱԲԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

#### ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(Այս գրութիւնը, որպէս իւրօրինակ ուխտագնացութիւն դէպի Կիպրոսի հնամենի Մակարավանքը, այժմ բռնազրկուած քրիստոնէական կոյտի կողմէ՝ 1974-էն ի վեր, չէ կորսնցուցած իր այժմէականութիւնը: Չայն կը յանձնենք մեր բնօրինակներուն ուշադրութեան, մանաւանդ որ Մայիս ամսուան մէջ կը տօնակատարուէր Մակարավանքի ուխտի օրը...)

2004-ի Յուլիսեան տօթակէզ օր մը կողողուինք դէպի Մակարավանք: Վաղուց փայտաշէն երանգանքի մը իրագործումն է սա: Նորօրեայ ուխտագնացութիւն մը: Երեսուն երկար ու ձիգ տարիներ մեզ կը բաժնեն այն երանելի օրերէն, երբ մշտապէս հասանելի կը թուէր Մակարավանքը մեզի: Ուխտավայր մը՝ ծուարած Կիպրոսի Քայրինեան լեռնաշղթայի ծովահայեաց լանջին, անտառապատ բնութեան ծոցը: Ուխտավայր՝ որ կու գար դարերու խորքէն եւ պատմական բոցով ու թոցով էր օծուած...:

Արդարեւ, մեր պատմական վէպերուն մէջ կը յիշատակուի որ Կիլիկիեան թագաւորութեան օրերուն, հայոց իշխանները յաճախ կ'անցնէին Մակարավանքէն տարբեր առիթներով: Այնտեղ ապրէր էր շրջան մը Միլիթար Սեբաստացին, նախքան որ վենետիկի մէջ հիմնէր իր անուանի ու վաստակաշատ միաբանութիւնը: Աւելի ետք, համենի վանքն ու անոր շրջակայքը դարձեր էին ամառանային օդափոխութեան վայր՝ կիպրոսայ շատ մը ընտանիքներու եւ մասնաւորաբար Մելգոնեան Կրթական Հաստատութեան գիշերօթիկ սանսանուհիներուն համար: Իսկ երկրորդ աշխարհամարտին, ամիսներով այնտեղ ապաստանէր էին Հաստատութեան բազմաթիւ ուսանողները, երբ Մելգոնեանը հարկադրաբար յանձնուեր էր ռազմական իշխանութեան, ինչպէս կը պատմէ տաղանդաւոր արձակագիր Կարպիս Սուրէնեան իր «Հին Պատմութիւն» գիրքին մէջ: Պատմութիւնը կը վկայէ, որ հայեր տիրացան դպրական այդ սրբավայրին շուրջ 13-14-րդ դարերուն: Վանքը կարելի է ենթադրել որ մտաւոր աշխատանքի վայր մը եղած է, ունեցած է միաբանութիւն մը, որ ընդհանրապէս զբաղելով հանդերձ վանական աշխատանքներով՝ մտաւորական համեստ ջանքեր է ի գործ դրած, ինչպէս կարելի է մակաբերել այնտեղ գրուած ձեռագիրներէն, որոնք հասած են մեզի, կը յայտնէ Երանաշնորհ Եպիսկոպոս Ղեւոնդ Զէպէեան:

Մեր օրերուն, նախքան անոր բռնազրակուած թուրք խուժողութեան կիւնը կողմէ՝ 1974-ին, Մակարավանքին մէջ տեղի կ'ունենային մկրտութեան եւ հարսանեաց հոգեպարար արարողութիւններ: Տեղի կ'ունենար ամէն տարուան Մայիսին՝ Մակարավանքի Ուխտի Օրը, որ նոր շունչ ու կենդանութիւն կը բերէր պատմական հնաբոց այդ վանքին: Տարեկան Ուխտի այդ օրը, Ս. Պատարագէն ետք, աւանդական հարիսան կը բաժնուէր բոլոր ուխտաւորներուն եւ միտոլորտը՝ վանքի շրջաբակին վրայ եւ մօտակայ պուրակներուն մէջ, կը լեցուէր տօնական ուրախ տրամադրու-

թեամբ՝ հայ խօսք ու զրոյցով, խինդ ու ծիծաղով, երգ ու նուագով, կերուխումով, մէկ խօսքով՝ համաժողովրդական ցնծութեամբ, որուն մասնակից կ'ըլլային բոլորը՝ տարեց թէ երիտասարդ, մեծ ու պզտիկ...: Ուխտի Օրը աւելին էր քան այս բոլորը: Անիկա էպէս Կիպրահայութիւնը հաղորդ կը դարձնէր իր պատմական հարուստ անցեալին հետ, գայն շողկապելով ներկային ու ապագային հետ... Նման միասնական ապրումներով չէ՞արդարեւ, որ Համայնք մը կը դառնայ համայնք՝ իր յատուկ պատմութեամբ, մշակոյթով, նկարագրով ու ինքնութեամբ... Իսկ Ուխտի Օրը կարծէք կը վերանորոգէր այդ հաւաքական ինքնութիւնը, ոգին, միասնականութիւնը...:

Այնքան շատ են ու սրտայոյզ՝ յուշերն ու պատմութիւնները կապուած այդ սրբատեղիին հետ, որ անիկա դարձեր էր տեսակ մը փոքրիկ Հայաստան, հայրենի անոյշ եզերքներէն բերուած մի բեկոր հարազատ հող, նշխար հայրենական:

Ահա քանի ամիս է, որ այցելուներ դարձեալ կ'ողողուին դէպի Մակարավանք՝ կարօտի ապրումներով, օգտուելով հիւսիս-հարաւ երկկողմ ազատ երթեւեկութեան հնարաւորութենէն, որ կ'ընձեռուէր բոլորին՝ Կիպրոսի Եւրոպական Միութեան անդամակցութեան բերումով: Տիտըր ու սրտակեղեք են անոնց ականատեսի վկայութիւնները՝ բռնագրաւեալ ազգային կալուածներուն մասին՝ եկեղեցի, դպրոց, ակումբ, հայկական հին Վիքթորիա թաղամասին, իրենց տուն ու տեղերուն մասին եւ ի մասնաւորի Մակարավանքին մասին:

Խառն ապրումներով ու սրտատրոփ ճամբայ կ'ըլլենք դէպի մեր վանքը: Բարեբախտաբար, կարճ կը տեւէ սահմանային ստուգման արարողութիւնը եւ քիչ ետք կը բարձրանանք կղզիին ամբողջ հիւսիսը երկարող Քայրինեան լեռնաշղթայի այն ճանապարհէն, որուն մէկ կողմը՝ Միջերկրական ծովուն անհուն կապոյտն է, միւս կողմը՝ արծուբեռն լեռներու երկնասլաց բարձունքները: Ոլորանի մը վրայ, ճամբեգրին դրուած ցուցանակի մը վրայ կը կարդամ՝ Sourp Magar Monastiri բառերը: Արձանագրութիւն մը՝ այս, որ յոյսի թրթիւր կու տայ սրտիս: Արդեօ՞ք չափազանցուած են մեր լսածները, եւ գուցէ ամբողջովին չէ՞ աւերակուած մեր վանքը...: Այլապէս, կը մտածեմ, ինչո՞ւ չի յատակել գայն նման ցուցանակով: Թուրք անտառապահը դժկամութեամբ մեզի կը յանձնէ՝ վանքին ազատ մուտքը արգելակող եւ շուրջ մէկ քիլոմետր երկարող, երկաթեայ անցարգելի բանալին: Կը յառաջանանք՝ սքանչանալով դրախտային բնութեան վրայ, ուր դալարագեղ սոճիներն ու պէսպիսուն թուփերը կ'արձակեն իրենց զովաշունչ եւ արբեցնող բուրմունքը, մինչ վարը, մեր հայեացքին դիմաց փոռած է Միջերկրական ծովը, իր փիրուզեայ ցոլանքով... Տարտամ զգացում մը, սակայն, կը պղտորէ տրամադրութիւնս: Նախազգացո՞ւմ մը արդեօք այն հոգեցունց իրականութեան, գոր պիտի յայտնաբերենք շուտով...:

Վանքի մուտքին մօտն ենք արդէն: Վարանոտ այլեւ արագ ակնարկ մը՝ ամբողջ համայնքին



վրայ, կը պարագրկէ ահաւորութիւնը կատարուածին եւ կը ցնցող էութիւնս: Երեւակայութիւնս երբեք պիտի չկարենար պատկերացնել ա՛յն, որուն ականատեսը կ'ըլլամ: Համատարած աւերածութիւն է շուրջ բոլորս: Ոչինչ մնացած է վանքի երբեմնի բարեգարդ, կեանք ու կենդանութիւն բուրոյ վիճակէն: Մատուռին եւ բակին դիմաց գտնուող երբեմնի շէնքը, որուն երկրորդ յարկին վրայ կառուցուած էին բազմաթիւ բնակելի սենեակներ, ուր կ'իջեւանէին նաեւ ուխտաւորները շատ անգամ, քանդուած է ամբողջութեամբ: Կը մնայ միայն սենեակներուն մերկ կմախքը՝ անդուռ, անպատահան, աներդիք: Մէկ բնակելի սենեակ պահպանուած է լոկ, ուր կ'ապրի հաւանաբար թուրք պահակը: Քանդուած են պատշգամբ, աղբիւր-աւազանը... Կը մտնեմ մատուռէն ներս փլած սրտով: Ոչ մէկ հետք այն խնկաբոց արթնաթոնջով ու շարականներով կը շնչաւորուէր երեսուն տարիներ առաջ: Խորտակուած է խորանը, տանիքը, մկրտութեան աւազանը, ակնյայտ դիտաւորութեամբ բնաջնջուած է հայատառ ամէն արձանագրութիւն: Մատուռին մէջտեղը, խորանին դիմաց, դիզուած է փշրուած քարաբեկորներու հսկայ կոյտ մը, որ աղաղակով փաստն է կատարուած ահեղ սրբապղծութեան:

Ժամանակը՝ առանձինն, կը մտորիմ, երբեք պիտի չկարենար պատճառել այսքան աւերածութիւն

հաստատապէս, եթէ մարդկային յոռեգոյն բնագոյները, բարբարոսութիւնն ու վանտալիզմը ի գործ չդնէին իրենց կործանարար մոլուցքը: Ակամայ կը մտաբերեմ Վիքթոր Հիւկոյի յայտնի դիպուկ խօսքը. «Ամէն տեղ սուգ է ու աւեր, թուրքը անցած է ասկէ»:

Վանքին ետեւի պարտէզին մէջ, բլուրի մը վրայ՝ միայնակ կոթող մը կը մնայ կանգնած, որուն վրայի հայատառ արձանագրութիւնը կը նշէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ.-ի այցը Մակարավանք: Այդքան: Սրտածմլիկ, սարսուռազդեցիկ տեսարան մը՝ արդարեւ:

Սրտաբեկ կը բռնենք վերադարձի ճամբան: Մայրուղիին վրայ, կը նշմարեմ ցուցանակ մը եւս՝ Sourp Magar Monastiri տառերով: Ո՛վ հեզնանք, կը մտածեմ, Եւրոպայի դռները թակող թուրքիան՝ նման ցուցանակներով, թէ այլապէս, կը փորձէ «քաղաքակիրթ» կեղծ դիմակով մը ներկայանալ աշխարհին, որպէս մարդկային իրականաց պաշտպան, մշակութային արժէքներու պահապան... Մինչդեռ, իսկութեան մէջ, օրը ցերեկով, ան անխափան ու անարգել, կը գործադրէ իր մշակութային եղեռնը, փորձելով ոչնչացնել բռնագրաւեալ մեր մշակութային ժառանգութիւնը, յուշարձաններն ու կոթողները, որոնք մեր անուրանալի հետքն ու կնիքն են չքնաղ այս կղզիին վրայ ուր, ըստ պատմութեան տուեալներուն, ոտք ենք դրեր դեռեւս վեցերորդ դարուն:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



Ուսուցիչներն են, որ գիտեն  
 այն մասին, որ մեր  
 աշակերտների ուսումը պետք  
 է լինի համապարփակ,  
 պարունակի երաժշտություն,  
 արվեստ, գիտություն և  
 աշխատանքի  
 համար տեխնիկական  
 ուսուցում:

Նրանք գիտեն, որ  
 օրինաչափված քննությունը  
 պատասխանը չի:

Դպրոցները պետք է լավ  
 կերպով ֆինանսավորված  
 լինեն, որ հնարավորություն  
 ունենան պահպանեն քիչ թվով  
 աշակերտներ ունեցող  
 դասարաններ:

Եւ կոլեջը պետք է մատչելի  
 լինի բոլոր աշակերտների  
 համար:

Ուստի, եթե ձեր  
 շրջանի դպրոցի կամ  
 կալիֆորնիայի ուսման  
 մասին հարց ունենաք,  
 հարցրեք որևէ



## ՈՒՍՈՒՑԻՇԻԿ:

Հանրային դպրոցները  
 ավելի լավ կալիֆորնիա  
 են կերտում բոլորիս  
 համար:

[cta.org](http://cta.org)

Վճարված է կալիֆորնիայի ուսուցիչների  
 միության կողմից






# ԳԱՐԻԷԼ ՍՈՒԼԹԱՆԵԱՆԻ «ՅԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ» ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՅԵՐԵՆ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ

## ՄԵԼԱՆԻԱ ՔԱԴՒԱԼԵԱՆ

«Մովսէս Խորենացին անգոյու թիւնից ստեղծեց «Հայոց Պատմութիւնը»՝ մշտապէս կիրառելով ողջամիտ ու ճշմարիտ սկզբունքներ եւ երբեք չփորձելով գիտակցաբար մոլորեցնել ընթերցողին: Խորենացու գիրքը եղել է մեր պատմութեան միակ աղբիւրը՝ նրան յաջորդող 1400 տարիներին, որոնց ընթացքում մեզ համար անյայտ է մնում, թէ քանի-քանի անգամ է այն խմբագրուել եւ ընդօրինակուել, որոնք էլ բազմաթիւ անճշտութիւնների պատճառ են դարձել: Յուսամ, որ այս գիրքն ուսումնասիրողները կը համաձայնեն ինձ հետ եւ ըստ արժանւոյն կը գնահատեն Մովսէս Խորենացու 5-րդ դարի այս անգուգական ստեղծագործութիւնը»:

2005 թուականին Գաբրիէլ Սուլթանեանը Անգլիայից բնակութեան տեղափոխուեց Երեւան՝ թողնելով Մանչեստրը, որտեղ ապրել եւ աշխատել էր աւելի քան կէս դար: Տակաւին շատ երիտասարդ, 21 տարեկանում կիպրոսից նա եկաւ Մեծ Բրիտանիա, կարճ ժամանակ անց հաստատուեց Մանչեստրում, մուտք գործեց տեղի առեւտրա-արդիւնաբերական շրջանակներ եւ շնորհիւ աշխատասիրութեան, կամքի ու յամառութեան, կարողացաւ յաջողութիւն ունենալ այս ասպարէզում: Սակաւաքանակ էր հայութիւնը անգլիական այս քաղաքում, եւ ինչպէս ամէնուր է սփռուած, այստեղ նոյնպէս ազգային կեանքը կազմակերպում եւ ծաւալում էր հայկական եկեղեցու շուրջ, որի կայացման գործում իր աւանդն ունեցաւ նաեւ Գաբրիէլ Սուլթանեանը: 1984-ին նա Սբ. Երրորդութիւն հայկական եկեղեցում բացեց կիրակնօրեայ դպրոց՝ մինչեւ այսօր գործող: Իսկ 1990-ական թուականներին նրան յանձնարարուեց ղեկավարել ՀԲԸ Միութեան Լոնդոնի եւ Մանչեստրի մասնաճիւղերը:

Առեւտրատնտեսական բուն գործունէութիւնից եւ հանրային-ազգային խնդիրներով զբաղուելուց բացի մեր հայրենակիցը անբացատրելի սէր եւ հետաքրքրութիւն է ունենալ եւ շարունակում է ունենալ հայոց պատմութեան եւ յատկապէս նրա վաղնջական անցեալի՝ նախահայոց շրջանի հանդէպ, այն աստիճանի, որ նրան պարզ հետաքրքրողից մղել է ուսումնասիրողի մասնագիտական լուրջ ոլորտ: Տարիների ընթացքում խորացնելով պատմագիտութեան իմացութիւնները, ընթերցելով, ուսումնասիրելով անցեալի եւ ներկայի հայ եւ օտար գիտնականների բազմաթիւ աշխատութիւններ՝ քաջատեղեակ պատմական կարեւոր սկզբնաղբիւրներին, աւելի ուշ տարիքում արդէն հանդէս եկաւ սեփական աշխատասիրութիւններով՝ հայոց պատմութեան նախասկիզբին, նախազրախին հայերէնին վերաբերող՝ պատմագիտութեան մի ասպարէզ, որը գիտականօրէն համեմատաբար քիչ է ուսումնասիրուած, շատ հարցեր բացայայտուած չեն եւ բանավիճախն են համարուում առ այսօր, քանի որ



պատմաբանների կարծիքներն այդ հարցի շուրջ իրարամերժ են, երբեմն հակասական: Եղե՞լ է արդեօք նախամշտոցեան գրաւոր լեզու, որտեղից է սկիզբ առնում մեր պատմութիւնը: Այս հարցերի պատասխանները գիտակցական կեանքի ընթացքում միշտ որոնել է Գաբրիէլ Սուլթանեանը, ուսումնասիրելով հայ եւ օտար մատենագիրներին՝ սկզբնաղբիւրների քննութեան տեւական ու մանրագնին աշխատանք արել, վաղ շրջանի եւ յետագայ դարաշրջանների պատմա-լեզուաբանական աշխատութիւնների բնագրային համեմատութիւններ կատարել: Տարիների աշխատանքը արդիւնաւորուել է իր հրատարակած մի շարք հատորներով:

Նրա առաջին գիրքը՝ «Հայոց նախպատմութիւնը» (The Pre-History of the Armenians) եռահատոր աշխատութիւնը՝ նուիրուած մեծանուն լեզուաբան Հրաչեայ Աճառեանին, լոյս տեսաւ Լոնդոնում, անգլերէնով՝ Bennett & Bloom հրատարակչութեան կողմից. անդրանիկ հատորը 2003-ին, յաջորդ երկուսը՝ 2004 եւ 2009 թուականներին: Նոյն Bennett & Bloom հրատարակչութիւնը 2007-ին՝ տպագրեց «Սեբէոսի պատմութիւնը» (The History of Bishop Sebeos) աշխատութիւնը, «Հայոց պատմութիւնը եւ Մովսէս Խորենացին» (The History of the Armenians & Movses Khorenatsi) լոյս տեսաւ 2012-ին, եւ մէկ տարի անց՝ 2013-ին «Նախահայոց հիերոգլիֆային արձանագրութիւնների նոյնահնչիւն բառարմատները» աշխատութիւնը: Սուլթանեանը վերծանել, թարգմանել է նախահայկական հիերոգլիֆային 105 արձանագրութիւն, փաստում է, որ Արամի երկրում ձեւաւորուած են եղել հայկական մի քանի թագաւորութիւններ, որոնցից շատերը թողել են արձանագրութիւններ՝ փորագրուած քարերի, կապարի վրայ, որոնք պահպանուած են Պոլսի, Անկարայի, Մարաշի թանգարաններում:

«Նախահայոց հիերոգլիֆային արձանագրութիւնների նոյնահնչիւն բառարմատները» վերջին աշխատութեան մէջ հեղինակը մի շարք ճշգրտումներ, սրբագրումներ է կատարել եւ նոր հնչիւններ յաւելել Լաուրի հիերոգլիֆային կատալոգում: Այս հատորի աւելի չորսանգիւղի

Լեյդեն (Leyden) համալսարանի լեզուաբանութեան ամպիոնի վարիչ, հայագետ Վայթընբերգը գրել է նրան. «Այսուհետեւ անատուրեան (լուվեան) հիերոգլիֆների ուսումնասիրութիւնը պէտք է ընթանայ ձեր դրած հիմքերի վրայ»:

«Միտքս միշտ զբաղած է եղել՝ փնտռելու-գտնելու հայոց արմատները, որը շատ ժամանակ ինձնից առաւ, որովհետեւ այդ մասին հին գրութիւնները շատ են, որոշակի տեղ գոյութիւն չունեն, հետեւաբար ստիպուած էի հին ժողովուրդների պատմութիւնները բոլորն ուսումնասիրել, բայց ամէն ինչ սկսուեց նրանից, երբ յայտնաբերեցի բուլղարացի ակադեմիկոս Ջորջիեւի յօդուածները պոնեանների (paioves-հուն.) մասին:

Սակայն Ջորջիեւը այդ բառը չի կարողացել բացատրել: Զահուկեանը Ջորջիեւից է այդ անունը վերցրել, բայց նա էլ չի կարողացել բացատրել: Առաջինը ինձ յաջողուեց այդ բառը բացատրել, որ նշանակում է հայ արարածներ (pai- հայ, ov (օն)- հուլիւն):

Յետագայ ուսումնասիրութիւններս, հետազոտութիւններս ինձ մօտեցրին հայերի նախապատմութեանը, նրանց արմատներին:

Հայաստան մտնելուց առաջ, 600 տարի մենք ապրել ենք Արամի երկրում: Այդ տարիների ընթացքին ունեցել ենք թագաւորութիւններ, որոնց անունները Խորենացին իր «Պատմութեան» մէջ նշում է, սակայն դրանք ճիշտ չէին հասկացուել, առաջին անգամ այդ անունները ես բացատրեցի», -մեր մի գրոցուած ասում էր նա եւ փաստներն այնպէս էր ներկայացնում, ասես հենց այդ իրականութեան մէջ լինէր, խօսում էր յափշտակուած, գարմանալիօրէն մերձ ապրում հազարամեակների վաղեմութեամբ դէպքեր, իրադարձութիւններ, թուում էր՝ ինքն էլ այդ ժամանակների մասնակից է, արձանագրող կամ մի պատմիչ:

Գ. Սուլթանեանի բոլոր աշխատութիւնները գրուած են անգլերէնով եւ հայկական, յատկապէս հայաստանեան գիտական, առաւել եւս հանրութեան լայն շրջանակներին գրեթէ անծանօթ են: Եւ ահա սփիւռքի մի շարք մտաւորականներ նրան յորդորում են գնալ Հայաստան, հայրենիքում գործել, ձեւաւորել նոր հայեացք, կարծիք եւ ինչպէս ինքն է ասում տարածել իր գիտութիւնը՝ ասել է թէ ցոյց տալ մեր նախասկիզբը, նախահայոց պատմութիւնը, որով իսկ յայտնի դարձնել իր ուսումնասիրութիւնների նշանակութիւնը ժամանակակից հայ պատմագիտութեան համար: «Հայաստան եկալ օգտակար լինելու համար, սակայն հիմա այնպէս կը կարծեմ, թէ իմ օգտակարութիւնը չեն ուզեր այստեղ: Հայաստան գալս մէկ առաւելութիւն ունի՝ մենակ եմ եւ միշտ կ'աշխատեմ»: Իրօք, հայաստանեան տարիները բեղմնաւոր եղան, 2005-ից ցայսօր նա հրատարակել է հինգ գիրք, որոնցից մէկը՝ «Հայոց պատմութիւնը եւ Մովսէս Խորենացին» աշխատութիւնը լոյս տեսաւ այս տարի, Երեւանում

նում («ՎՄՎ- ՊՐԻՆՏ»), առայժմ միակը հայերէնով:

Հեղինակը գիրքը նուիրել է Մար Աբաս Կատինայի եւ նրա անծանօթ խմբագրի յիշատակին: Աշխատութիւնը բաղկացած է չորս մասից. առաջին մասը նուիրուած է Մովսէս Խորենացու անցեալի ու ներկայի քննադատներին, մասնաւորաբար Թումանյանին, Թումանյանի եւ Մահէի աշխատութիւններին եւ տեսակէտներին: Երկրորդ մասում քննուում եւ ապացուցուում է հայ եւ միջազգային պատմագիտութեան վիճելի հարցերից մէկը՝ Խորենացու ժամանակը, որը շուրջ երեք հարիւրամեակ դարձել է հայ եւ միջազգային պատմագիտութեան եւ բանասիրութեան բանավիճախն նիւթ: Գ. Սուլթանեանը փորձում է հաստատել Խորենացու՝ 5-րդ դարի պատկանելութիւնը՝ այն, որ նա իր «Պատմութիւնը» գրել եւ աւարտել է 474 թուականին: «Ես քննադատում եւ հակասութիւններն եմ ցոյց տալիս այն գիտնականների կամ կարծեցեալ գիտնականների, որոնք Խորենացուն բանագող, անվստահելի կը համարեն: Վաւերացումները փաստուած են «Գիրք թղթոց»-ից եւ ուրիշ պատմութիւններից, որոնց համաձայն Խորենացին 474 թ. վերջացրել էր գրել իր պատմութիւնը. հետեւաբար ինչպէս են ասում, թէ նա 7-8 կամ 9-րդ դարերի հեղինակ է: Նրանցից մէկն այն համոզմունքն ունի, թէ Խորենացին 9-րդ դարի վերջաւորութեան է պատկանում, բայց իր յաջորդ գրքում գրում է, թէ յունաբան դպրոցը ձեւաւորուում է VI դարում եւ VII դարում աւարտուում, եւ որ Խորենացին է դա հրապարակ հանել: Հետեւաբար ինչպէս կարող էր VI դարի երեւոյթը հրապարակ բերողը IX դարին պատկանել: Մէկ ուրիշը գրում է, թէ՛ Խորենացին արժանահատ է, որովհետեւ չի տեսել Անանուկի պատմութիւնը, իսկ յաջորդ գրքում գրում է՝ Խորենացին ստրկօրէն հետեւում է Անանուկի պատմութեանը: Կը տեսնէ՞ք հակասութիւնը»:

Աշխատութեան երրորդ մասում տրուած են Խորենացու 1-ին գրքի իր մեկնաբանութիւնները, որոնք բացայայտումներ, հերքումներ են մինչ այսօր եղած, ինչպէս ինքն է ասում, գրքի մակերեսային ընկալումների կամ սխալ ընթերցումների, չորրորդում անդրադաձ է արուած Մար Աբաս Կատինայի առեղծուածին:

Գրքում տեղ են գտել հայոց պատմութեան յիշեալ շրջանին վերաբերող այլ ուսումնասիրութիւններ նոյնպէս, իր խօսքով՝ մեր պատմութեան մէջ հեքիաթային կերպարանք ստացած մի քանի անձնաւորութիւնների մասին՝ Արա Գեղեցիկ, Տորք Անգեղ, Անուշաւան, Գոռակ, ինչպէս եւ՝ «Նախահայերի թագաւորութիւնները Արամի երկրում», «Հայերի հակիրճ նախապատմութիւնը», «Անատոլիայի հիերոգլիֆային արձանագրութիւնները» յօդուածները: «Երկու խօսք» եւ «Ներածութիւններ» բաժիններում հեղինակը ամփոփ ներկայացնում է ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը, հիմնական միտումներն ու նպատակը:



### ԺԱՆԵԹ ՔԱՍՈՒՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ



#### ՆՈՐԱ ՊՈՒՆՏՈՒԳԵԱՆ

Շատ մը գիտական ուսումնասիրությունները եւ հետազոտությունները համաձայն, մանուկները մօտ ընթերցանությունը շատ անհրաժեշտ է բազմաթիւ պատճառներու համար: Ան կ'օժանդակէ մանուկներուն միտքը զարգացնելու, սնուցանելու, կեդրոնացումի, տարրական հմտություններու, տրամաբանությունեան եւ բարձր ըմբռնումին: Ինչպէս նաեւ մանուկներու ընթերցումը եւ գիրքի հետ անոնց յարաբերությունը կը զարգացնէ անոնց մտային եւ լեզուական կարողությունները եւ մեծապէս կը նպաստէ մանուկին ակադեմիական բարելավման, ընդունակությունեան եւ ընդհանուր կարգապահությունեան:

Արդարեւ, գիրքը եւ մասնաւորաբար Հայերէն գիրքը մեր մանուկներուն համար պէտք է ըլլան հաճելի եւ գեղեցիկ իրականություն մը, մանաւանդ եթէ անոնք առիթը ունենան մօտէն ծանօթանալու, ունկնդրելու եւ խօսելու գիրքի հեղինակին հետ:

Հետեւաբար, այս աւելցումներով, Ուրբաթ, Մայիս 9, 2014ին, Հայ Քոյրերու Վարժարան այցելեց վաստակաւոր կրթական մշակ ու մանկական պատմութեան հեղինակ՝ Տիկին Ժանէթ Քասունի: Ան գիմաւորուեցաւ Դպրոցի Տնօրէնուհի՝ Քոյր Լուսինայի եւ Մանկամտերի Վարիչ՝ Տիկին Սոնիա Գազանճեանի կողմէ: Ապա Տիկին Ս. Գազանճեանի ընկերակցութեամբ այցելեց Մանկապարտէզի Ա. եւ Բ.

Դասարանները, ուր աշակերտները անձկութեամբ կը սպասէին ծանօթանալու իրենց սիրած «Հինգ ձուտիկները» նկարագրող պատմութեան գիրքի հեղինակին:

Տիկին Քասունի ինքզինք ներկայացնելէ ետք, արտայայտեց մանուկներու հանդէպ իր անսահման սէրը եւ թէ անոնց համար իր պատմութեան քերթերը գրելը: Ապա, բոլոր աշակերտներուն ծանօթանալէ ետք ընթերցեց իր գրքոյկը, մերթ ընդ մերթ կատակելով եւ հետաքրքրական մէջբերումներ կատարելով: Աշակերտները հետաքրքրությունեամբ ու հրապուրով ունկնդրեցին տիկին Քասունիին, որը իր ժպիտով, ցած ձայնով եւ մանուկներու հանդէպ իր մեծ սիրով լաւագոյնս տպաւորեց մեր աշակերտները: Նոյնպէս ալ իրենց կարգին մեր աշակերտները արտասանեցին եւ երգեցին «Ուխտաւորները» երգը: Ան գովաբանեց մեր աշակերտները իրենց ցուցաբերած յարգանքին ու մասնակցությունեան համար: Ապա նախքան մեկնելը, Տիկին Քասունի առատաձեռնօրէն իր գրքոյկները բաժնեց մեր աշակերտներուն: Հաճելի ու հետաքրքրական օր մըն էր. Անկասկած որ իւրաքանչիւր աշակերտի մտքին եւ սրտին մէջ պիտի մնայ յիշատակելի օր մը:

Շնորհակալություն Տիկին Ժանէթ Քասունիի իր համեստ այցելությունեան, իր տրամադրած անգին ժամանակին եւ նուիրած գիրքերուն համար որ առաւել պիտի ճոխացնէ մեր աշակերտներուն համեստ ու օգտաշատ գրադարանը:

### ԼԱԻՍԵՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՊԱՍԵՄ ՍՐՏԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գտնուող Միչիկըն Համալսարանի հոգեբանական բաժանմունքի գիտնականներէն՝ Էրիք Քիմ վերջերս լաւատեսութեան օգուտներուն գծով կատարած է ընդարձակ ուսումնասիրություններ: Այս ծիրին մէջ նախապէս կատարուած հետազոտություններ ցոյց տուած են թէ լաւատեսությունը, այլ խօսքով՝ ապագայի նկատմամբ դրական մտայնութիւնը, կրնայ օգտակար ըլլալ ֆիզիքական առողջութեան: Այլ ուսումնասիրություններ մը ցոյց տուած է, թէ սրտի հարցերէ տառապող անձերու մօտ լաւատեսությունը կրնայ արագացնել բուժումը եւ նուազեցնել սրտանօթային հարցերու հաւանականությունը:

Միացեալ Նահանգներու մէջ մօտաւորապէս 5.1 միլիոն անձեր կը տառապին սրտի հետ կապուած անհանգստություններէ:

Անոնց 50 առ հարիւր համեմատությունները ախտաճանաչումէն հինգ տարիներ ետք կը մահանան անհանգստութեան հետեւանքով: Էրիք Քիմի գլխաւորությունեամբ կատարուած ուսումնասիրությունեան համաձայն, սրտի հարցերէ տառապող մարդոց 80 առ հարիւր համեմատությունեան տարիքը 65-էն բարձր է: Հետեւաբար, Քիմ իր կատարած նորագոյն ուսումնասիրությունեան միջոցով կը ջանայ քննել լաւատեսութեան հետեւանքները 50-էն բարձր տարիքով մարդոց մօտ:

Միացեալ Նահանգներու լաւագոյն համալսարաններէն՝ Հարվըրտ Համալսարանի օժանդակությունեամբ Միչիկըն Համալսարանի հետազոտական խումբը կ'ուսումնասիրէ մօտաւորապէս 7000 տարեցներու հոգեբանական եւ ֆիզիքական առողջութեան անցեալը եւ ներկայ կացությունը:

Չորս տարուայ տեւողությամբ ուսումնասիրությունեան աւարտին, հետազոտողները յայտնաբերեցին թէ լաւատես մարդոց մօտ մինչեւ 73 առ հարիւր համեմատությունեամբ նուազած է սրտի անհանգստությունեան տառապելու հաւանականությունը՝ ուսումնասիրությունեան ընթացքին:

Ըստ հոգեբան Էրիք Քիմի լաւատեսությունը մարդիկ կը մղէ առողջապահական կենցաղ որդեգրելու: Լաւատես մարդոց մօտ հաւանական է հակաճշնոտութեան աշխատանքներու հետեւելու կամքը, մարզանքը, սովորական կերպով բժիշկներու այցելությունը, որոնք բոլորը կը նպաստեն առողջութեան:

Ի դէպ, Միչիկըն եւ Հարվըրտ գոյգ համալսարաններու համագործակցությամբ կատարուած այս ուսումնասիրությունեան մասին անդրադարձած է Circulation: Heart Failure ամսագրերը:

Այս ուսումնասիրությունեան արդիւնքներէն մէկնելով ջանացե՛ք գաւաթ միշտ լեցուն տեսնել՝ մանաւանդ յիսուն տարեկանէն ետք: Յոռետեսությունը ոչ մէկ ձեւով կ'օգնէ առողջութեան:

### ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՕՆ ՄԸ

Գիտությունեան շնորհիւ յայտնաբերուած են բազմաթիւ գործօններ, որոնք կրնան նուազեցնել մահուան հաւանականությունը եւ նպաստել երկարակեցությունեան: Այս գործօններէն են՝ ծխախոտէն ձերբազատուիլը, նուշի եւ պիստակի չափաւոր սպառումը, ամուսնությունը, երկաթով հարուստ ուտելիքներու սպառումը, հաւասարակշռուած անդակախոտ: Վերջերս, երկարակեցությունեան գծով կատարուած նոր ուսումնասիրություններ մը կը յայտնաբերէ հոգեբանական հետաքրքրական գործօն մը, որ կրնայ երկարել մարդուն կեանքը:

Բաթրիք Հիլի գլխաւորությամբ Գանատայի մէջ գտնուող Գարլթոն Համալսարանի հետազոտական խումբը համագործակցելով Միացեալ Նահանգներու մէջ գտնուող Բոչէսթըր Համալսարանի գիտնականներուն հետ, կատարած են ընդարձակ հետազոտություններ: Այս հետազոտությունեան արդիւնքները հրատարակուած են Psychological Science ամսագրերին մէջ:

14 տարիներու ընթացքին աւելի քան 6 հազար կամաւորներու մասնակցությամբ, գանատական ամերիկեան ուսումնասիրությունները ցոյց տուած է թէ կեանքի ընթացքին առաքելություն ունենալու համոզումը կրնայ նպաստել երկարակեցությունեան:

Մարդիկ որոնք համոզուած են որ ունին նպատակ եւ կ'աշխատին իրագործել զայն կրնան աւելի երկար ապրիլ:

Բաթրիք Հիլ եւ իր գործընկեր՝ Նիքոլաս Դուրիանօ կ'ըսեն թէ նախապէս գիտնականները յաջողած են կապ մը գտնել երկարակեցությունեան եւ կեանքի իմաստաւորման միջեւ, սակայն ոչ մէկ ընդարձակ ուսումնասիրություններ մը կատարուած էր նախապէս այս կապին գծով:

Ուսումնասիրությունեան մասնակցներու կեանքի նկատմամբ կարծիքները, վարմունքը եւ տեսակետները 14 տարուան ընթացքին յաճախ քննուած են յատուկ հարցաբաններու միջոցով:

Ուսումնասիրությունեան ընթացքին 569 մասնակցներ մահացան:

Ըստ հետազոտությունեան մահացողները նուազ լաւատես էին քան մնացեալ մասնակցները: Անոնք նաեւ նուազ ինքնավստահ էին իրենց կեանքի նպատակին եւ առաքելությունեան նկատմամբ:

Ուսումնասիրությունեան աւարտին ի յայտ կու գայ թէ կեանքի նպատակ ունեցող մասնակցներուն մօտ նուազ է մահուան հաւանականությունը: Հետաքրքրական է, որ երկարակեցությունեան եւ կեանքի նպատակի միջեւ կապը առկայ է բոլոր տարիքի մարդոց մօտ:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 100,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel:----- Fax: -----

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979



### ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

#### Շարունակում է 13-էն

ուժի հետ եւ նրանց միջոցով շարունակում է ուժի մի նոր ցանցի, որ տարածում է դէպի անհունութիւն: Բոլոր տիեզերքը ազդում է ներառեալ՝ մենք: Նման է կեանք տալու մի ուժի, որ օղակում եւ ինքնաբերաբար անվերջ «քլոնանում»-(նմանակերտում) է այսպէս ասած: Ենթագիտակցաբար, մենք ամէն երկվայրկեան ապրում ենք բնականորէն ու տարածման այդ ընթացքը»:

Ահա՛ ա՛յս գիտափոխութեան հիմունքներուն վրայ յենելով եւ անոնցմէ մեկնելով Ալիսիան կը խորանայ արդի կեանքի բազմաձաղ երեւոյթներէն ներս եւ կը պատգամէ ելքը փրկութեան որ Մէրը, խաղաղութիւնը եւ Ներումն է:

Իրերու կացութեան իր հաստատումները ճշգրիտ են ու դիպուկ: Ան խոր ճանաչողութիւնը ունի երկրային եւ տիեզերական իրավիճակին.

«Սուտ եւ ցեխուածութիւն. Պատերազմ եւ կործանում. Նրանք դէմքերն են մնացող երբ անբաշխակութիւնն է Յեռանում:

Անտուն դէմքեր քօղարկուած Աշխարհային փառքերով. -Հանքեր հոգու պայթուցիկներով»:

Մարդկութիւնը մոռցած է ի վերուստ իրեն շնորհուած բարիքներն ու կարողութիւնները, շահոյթի եւ ազատութեան մոլուցքով տարուած, նիւթականին ու մամոնային կուռքերուն պաշտամունքով կը դիմէ դէպի հոգեկան կործանում, որ սկիզբն է նաեւ մարմնականին, եւ տակաւին, իր անխորհուրդ վարուելակերպով եւ միտումով իր հետ կը կործանէ նաեւ իրեն պարզեւուած շրջապատն ու միջավայրը, խախտելով անոր հիմնական հաւասարակշռութիւնը:

«Գնում ենք ոտաբոբիկ եւ աներեւոյթ Այն մարդկանց համար Որոնց հոգեկան բիբերը պատռուել են

Ու մարդկութիւնից գրկուած Դատում են մարդու:« Իսկ արդիւնք այս շեղում գայթակղումին

Մահը գալիս է միշտ. Խաղաղութեամբ կամ առանց խաղաղութեան

Ախ-երը սեփականացելով: Երազանքն անաւարտ է մնում եւ նշխարները թրջում են Աշխարհի արտասուքներով»:

Այս արատաւոր երեւոյթները ցոյց տալով, բանաստեղծը կու տայ նաեւ դարմանը որ խաղաղութիւնն ու սէրն է: Այս հատորը իսկապէս ձօնեղբայրութիւնն է, իր ձեւով իսկ սաղմոսերգութիւնը՝ խաղաղութեան

եւ սիրոյ: Երկուքն ալ անբաժան իրարմէ եւ գիրար ամբողջացնող: «Քուանտ» խորագիրով քերթուածը գեղեցիկ եւ խորիմաստ մտեցումով, արդիականութեամբ եւ գիտական ներթափանցութեամբ կը հռչակէ խաղաղութեան էությունն ու բարիքները:

«Մտածում եմ խաղաղութեան ու սիրոյ էութեան մասին եւ յանկարծ ճամբորդում եմ ուղեղիս տարածութիւններին մէջ Դէպի մի տարբեր Ծիր Կաթին, գտնելու համար Երկնային ոլորտների գաղտնի ուղին:

...Գիտեմ սակայն, թէ այն ճշգրիտ պահին Որ ուղիղ մայրում եմ սիրոյ աչքերի մէջ

Որ դիպչեմ խաղաղութեան՝ Սիրոյ ու խաղաղութեան մոր մասնակցներ եմ կեանք առնում Որ հարստացնում եմ գոյութիւնը մութը...»:

Կարծէք պատկերազարդելու համար իր այս կենսամտածողութիւնը՝ բանաստեղծուհին կերտած է արդի օրերու չորս «մարգարէ»ներու՝ Մահաթմա Կանտիի, Մայր Թերեզայի, Մարթին Լուտէր Քինկի եւ Նելսոն Մանտելայի դիմաքանդակները, իրենց խոր մարդասիրութեան, խաղաղութեան եւ տեսլապաշտութեան ցայտուն գիծերով կենդանացուած: Իւրաքանչիւրը՝ իր տիպական առանձնաչափութեամբ եւ ներքին ուժականութեամբ յատկանշուած է որպէս կենդանի խորհրդանիշը՝ հանդուրժողականութեան, սիրոյ, խաղաղութեան, նուիրումի եւ ներումի: Այսպէս, օրինակ՝ Մահաթմա Կանտիին կերպարը, դիպուկ եւ խուլիչ.

«Ինչպէս մի սուրբ որք այլում է ջրերի վրայ...

Իբրեւ ճշմարտութեան արարիչ Որ լոյս է արծակում Իմաստութեան ու սիրոյ՝ ներկայութիւնը թո

Ունեցաւ ուժն այդ Ձոր աստուածները նշանակեցին:

Դու մի մոր յեղափոխութիւն բեռեցիր

Յեղափոխութեան իմաստին Կնքելով թո անեզր հանդուրժողականութիւնը

Քո համբերութիւնն անսահման»:

Ազգային եւ տեղական նեղ շրջափակէն դուրս բանաստեղծին այս ոստումները կը բացուին համամարդկային լայն մտորումներ եւ եւ խմորումներու ընդգրկումին, առանց բնաւ սակայն պահ մ'իսկ մոռնալու մեր սեփական, ազգային աղէտալի եղեռնին ահագնութիւնը՝ որպէս անմարդկայնութեան վիթխարի ցուցանիշ եւ անարդարութեան անմեկնելի չափանիշ: Ալիսիան գնահատելի մտասեւեռումն

է, հոս, մեր Մեծ Եղեռնը վերջապէս ձերբազատել իրեն հարկադրուած եւ պարտադրուած ազգային նեղ շրջափակումէն եւ գայն սեպհակա-նութիւնը դարձնել ամբողջ մարդկութեան, «Թարմ շնչով ծածկելու համար խանձող սառնամանիքը աշխարհի»:

«Տէր Ձօր: Անպատր դրսի ներսդ է մտնում գլխագրով Եւ աւագաթոթի ճանկերով քերթում է հոգիդ:

Մէկ առ մէկ հառաչանքները փշոտ

Դաշունահարում են պատերը յիշատակի՝

Ու կատաղում են զգուս անթաղ ոսկորների

Ու գարկն են լսում չորացած արիւնի,

Որ ցնցում է հողը:

Երկինքը պայթում է անարդարութեան ռումբով

Ու մոխիրների մի անձրեւ անգորութիւնն է թագադրում»:

Այսպէս, ոճիւրներուն մեծագոյնը գործադրուած է լուսատեւէ ժողովուրդի մը հանդէպ: Եւ արդար պիտի ըլլար, որ «անոր արգանդէն ծնած» բանաստեղծը բողբոջի ու ցատումի ընդվզումին հետ, ոճրագործին ու անտարբեր մարդկութեան հանդէպ անէծքի վրիժգոռ խօսքեր ալ ունենալ:

Բայց քանի որ «պոէտները անէծքով չեն պղծեր իրենց շրթները», Ալիսիան դատապարտելով իսկ գործուած ոճիւրն ու անոր հետեւող անարդարութիւնը, կ'ապաւինի միայն չարին բարութեամբ յաղթելու քրիստոնէական պատուիրաններուն եւ իրը կը դարձնէ թողութեան եւ ներումի կոչը:

«Թողութեան եւ ներումի հրեշտակները իջնում են

Ու մենք հասկանում ենք ճշմարտութիւնը դիպուկ»:

Հրեշտակները բերում են երկնքից հակաթոյնը մեր վերքերի.

Մի նուէր խաղաղութեան:

Սենք տիրանում ենք պատգամին եւ աճում:

Պատուենք մեր հին հազուստները

Հիասթափութեան Տխրութեան

Ու բարկութեան Որովհետեւ գիտենք որ ատելութիւնը՝

իշխանն է մահուան Ու «սէրը՝ հանճարն է գոյութեան»:

Անշուշտ բանաստեղծը ազատ է իր համոզումներուն իրաւացիութեան եւ կարեւորը՝ գայն պատգամելու ձեւն է: Իսկ Ալիսիան օժտուած է խօսքի ուժականութեամբ, պատկերներու թռիչքային արագութեամբ եւ ճշգրտութեամբ, իր խօսքն ու պատգամը դիտպուկ եւ ներգործն դարձնելու համար: Ուղն ու ծուծով բանաստեղծ է ան, հարուստ ներաշխարհով, զուսպ, պիրկ զգականութեամբ եւ խորթափանց մտածողութեամբ, որ առօրեայի սովորական ոլորտներէն գիտէ բարձրանալ տիեզրականութեան համակարգին եւ հոն որոնելով գտնել իր հոգեկանն ու մտածողութիւնը լաւագոյնս արտայայտող տարրերն ու երեւոյթները:

Ամբողջական արդիական արտայայտչաձեւերուն տիրացած, ան հետեւ կը մնայ ծանծաղումներէ, եւ կուռ ու հակիրճ դարձուածքներով մեզի կը փոխանցէ իր ներլուզական աշխարհն ու պատգամը: Պատգամը իր մօտ տուրք մը չէ հոնտորակա-նութեան: Ան չի պարտադրուիր մեզի, այլ կը փոխանցուի համբերատար պայծառութեամբ, վարակումով, արուեստի ներուժ կախարդանքով, բանաստեղծութեան իրաւ շունչով: Իսկ պատգամը, պիտի ընդունինք որ, երբ թելադրական է եւ ոչ բռնադատող, ամէն իսկական բանաստեղծի կոչումն իսկ է ամէն բանէ առաջ, դէպի մարդկայնութեան յառաջընթացն ու Փրկութիւնը առաջնորդող: Ու Ալիսիա կիրակոսեան բանաստեղծը գինուրագրեալն է ու պատգամակիրը համամարդկային սիրոյ, խաղաղութեան եւ արդարութեան իտէալներուն, գեղեցիկի, ազնիւի եւ բարութեան տեսլականներով ոգեւոր:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506**

**«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի**  
**երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէմտայի 380-րդ կայանից**

**ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ**  
 Փասատինայի հայկական շրջանին մէջ յարմար պայմաններով վարձու է որեւէ գործի համար: 1300 sq. feet, վարձքը՝ \$1,200 տոլար: 1442 E. Washington Blvd., Pasadena, CA 91104 Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ **(626) 538-5454**

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայիչաբարբի բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր: Ինքնաշարժի վթարի նեպեղներով պատահած վնասուածքներու բուժում:

**Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է**



### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Շարունակում է էջ 7-էն

դէմ թուրքիոյ կատարած այս նոր յանցագործութիւնները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները այսու հրապարակաւ կը յայտարարեն Բարձրագոյն Դուան, որ իրենք այդ յանցագործութիւններուն համար անձնական պատասխանատուութիւնը կը դնեն թուրքական կառավարութեան բոլոր անդամներուն, ինչպէս նաեւ՝ տեղական այն իշխանութիւններուն վրայ, ովքեր մասնակից դարձած են նման կոտորածին:» («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 6)

Այսօր, ո՞վ պիտի կանգնի աշխարհի մարդասէրներու կողքին, պատասխանատուութեան հրաւիրելու թուրք կառավարութիւնը:

Այնպէս ինչպէս համաշխարհային պատերազմի աւարտին Միջազգային հասարակութիւնը եւ դաշնակից պետութիւններ պահանջեցին պատասխանատուութեան ենթարկել Արեւմտահայութեան սպանող կազմակերպող թուրք ղեկավարները:

Եւ ինչպէս՝ 1918 թ. Նոյ. 12ին Մեծն Բրիտանիոյ Համայնքներու պալատին մէջ բողոքի ձայներ բարձրացան, երբ ելոյթ կ'ունենար «Ռայթը անգլիական կառավարութենէն պահանջելով՝ որ դաշնակիցներու ներկայացուցիչները թուրքիոյ հետ խաղաղութեան պայմանները քննարկելով յատուկ կանգ առնեն հայկական կոտորածներու յանցագործները պատժելու հարցին վրայ»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 12)

Դժբախտաբար, ոչ՝ Սուլթանական թուրքիան եւ ոչ՝ Երիտթուրքերու կառավարութիւնը կարենորութիւն ընծայեցին եղած յայտարարութիւններուն, այլ անողորմ դաժանութեամբ շարունակեցին իրականացնել իրենց որդեգրած քաղաքականութիւնը:

Վերջապէս երբ 1918-ին վրայ կը հասնի Մուտրոսի գինադադարը, թուրքիոյ նոր կազմուած վարչութիւնը, Միջազգային հասարակութեան եւ արտաքին աշխարհի բողոքներու ուժեղ հոսանքին տեղի տալով, զատորոշուելու վարկաբեկուած նախորդ վարչակարգէն, որոշում ընդունեց դատել հայկական ջարդերուն ու կոտորածներուն պատասխանատուները:

Այդ նպատակով, Ահմէտ Իգզէթ Փաշայի գլխաւորութեամբ նոր կազմուած վարչութիւնը որոշում կայացուց դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներուն՝ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամներուն. Օսմանեան կայսրութիւնը Առաջին Համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու եւ հայերուն տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար:

Այնուհետեւ, 1918 թ. Դեկտ. 16-ի որոշումով կը կազմուին հարցաքննիչ յանձնախումբեր (գլխաւոր նախագահն էր Անգարայի նախկին Վալի Մագար Պէյը), որոնք կը սկսին հաւաքել արեւմտահայերութեան կոտորած-

ներու վերաբերող մեղադրական ապացուցները՝ ծածկագիր հեռագրեր, պաշտօնական գրութիւններ, հրահանգներ եւ հրամաններ, ինչպէս նաեւ ականատեսներու վկայութիւններ: Օսմանական կայսրութեան Նահանգները կը բաժնուին 10 դատաքննչական շրջաններու, իւրաքանչիւր շրջանի համար կը նշանակուին դատախազներ:

Միեւնոյն ժամանակ մամուլը ծաւալուն լայն աշխատանք կը տանի յանցագործները բացայատելու եւ դատաքննութեան յանձնելու կապակցութեամբ:

Այս ուղղութեամբ ի թիւս այլ աշխատութիւններու մէջ հրատարակուած վաւերագիրներու եւ փաստաթուղթերու, Երիտթուրքերու դատավարութեան մասին, կարենոր փաստարկներ ու տեղեկութիւններ կը քաղենք «Հայերի Յեղասպանութիւնը ըստ երիտթուրքերու դատավարութեան փաստաթղթերի» (Երեւան 1988) գիրքէն, թարգմանութիւն ու ծանօթագրութիւն Ա. Յ. Փափագեանի :

Գիրքին մէջ գետեղուած են բնագրին հայերէն թարգմանուած «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամներուն, Երիտթուրքական կառավարութեան ղեկավարներու, կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարներու, պաշտօնեաներու դատաքննութեան նիւթերը, որոնք առնչուած են Արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածներու հետ:

Դատավարութիւններու արձանագրութիւններն ու որոշումները 1919-1920 թ թ. շատ քիչ տպաքանակով հրատարակուած են թուրքական պաշտօնական «Թաքիմ-ի Վեքայի» թերթի յաւելումներուն մէջ (արաբատառ): Բոլոր անուանաթերթերը կը կրեն հետեւեալ խորագիրը. «Նորին Մեծութիւն Փաղիշահի 1335 թ. (1919) Մարտ 8-ի կայսերական հրամանով կազմուած ռազմական արտակարգ ատեանի դատավարութեան արձանագրութիւնը»:

Այստեղ կը յիշուի, թէ 1919 թուականին Երիտթուրքերու կառավարութեան գործադրած յանցագործութիւնները դատապարտողներէն Տամաղ Ֆէրիտ Փաշան գտնելով, որ հայերու կոտորածները չեն եղած ցեղային բախումներու եւ կրօնական մոլեռանդութեան հետեւանք, կը յայտարարէ, թէ իր առջեւ նպատակադրած է « փաստերը ձեռքին ամբողջ աշխարհին ցոյց տալ, թէ ո՞րու վրայ կ'իջնայ իսկական պատասխանատուութիւնը այդ սարսափելի յանցագործութիւններուն :» («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 13)

Դատաքննութեան ենթարկուելու համար կը ձերբակալուին երիտթուրքերու կառավարութեան որոշ նախարարներ ու կուսակցութեան ղեկավարներ, լիազօրներ, ու կուսակալներ, եւ այլ պաշտօնատար անձինք: Սակայն հայկական կոտորածներու անմիջական մտայնացողներն ու կազմակերպիչները կը հասցնեն փախուստի դիմել դէպի Գերմանիա:

1919թ. Յունուար 8-ին Կ. Պոլսոյ մէջ կը կազմուին Առաջին, Երկրորդ, եւ Երրորդ ռազմական արտակարգ ատեաններ:

1919 թ. Մարտ 8-ին, սուլթան Մեհմետ 6րդ Վահիտետինի (1918-1922) յատուկ հրամանագրով երիտթուրքերու կուսակցական ղեկավարներն ու նախարարները «կը յանձնուին Կ. Պոլսոյ ռազմական արտակարգ ատեանի քննութեան»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 14)

Անոնց դատավարութիւնը կը սկսի 1919 թ. Ապրիլ 27ին Կ. Պոլսոյ մէջ, ընդհատումներով կը տեւէ մինչեւ Յունիս 26ը: Մայիս ամսուն տեղի ունեցած 6 նիստերու ընթացքին հարցաքննութեան ենթարկուած են «Միութիւն եւ Յարաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամները, Մեծ վեգիր Սայիտ Հալիմ Փաշան եւ մի քանի նախարարներ: Սակայն անբացատրելի պարագաներով Մայիս 28-ին անգլիական հրամանատարութեան կողմէ 77 հոգի բանտէն կ'աքսորուին Մալթա կղզին եւ կ'ընդհատուի դատավարութիւնը: Յունիս ամսուն մեղադրական նոր ապացուցներու հիման վրայ կը շարունակուի դատաքննութիւնը:

Յունիսական դատաքննութեան 7 նիստերու ընթացքին տեղի կ'ունենայ պետական պաշտօնական անձնաւորութիւններու դատավարութիւնը: Դատավարութիւնը կը կայացուի 1919 թ. Յուլիս 5ին:

Դատաքննութիւններու ընթացքին հեռակայ կարգով կը մեղադրուին 11, իսկ դատավարութեան ներկայ գտնուող 20 կուսակցական եւ պետական բարձրաստիճան գործիչներ:

Առաջին դատավարութիւնը տեղի կ'ունենայ 1335 թ. (1919) Ապրիլ 27-ին.

Դատի տրուած ներկայ գտնուող մեղադրեալներուն անունները են՝ Սայիտ Հալիմ Փաշա, Սայիտ Պէյ, Ահմէտ Նեսիմի Պէյ, Իպրահիմ Պէյ (քիւլչիկ), Թալէադ Պէյ, Ռիզա Պէյ, Միդհատ Շիւքրի Պէյ, Ջիա Գիոքալի Պէյ, Քէմալ Պէյ, ձեւաւ Պէյ, Աթեֆ Պէյ :

Հեռակայ կարգով դատի տրուած մեղաւորներն են՝ Թալէադ Փաշա, Էնվէր Փաշա, ձեւաւ Փաշա, Դոկտ. Նազըմ Էֆէնտի, Դոկտ. Պէհմէտտին Շաքիր Էֆէնտի, Դոկտ. Ռուզուհի Էֆէնտի, Ազիզ Էֆէնտի:

Միեւնոյն ժամանակ քրէական օրէնսգրքի 372-րդ յօդուածի հիման վրայ կը տրուի գլխաւոր դատախազ Նազիմ Փաշայի հաւանութիւնը բացակայներուն հեռակայ կարգով դատելու մասին:

Առաջին եւ յաջորդ մեղադրական եզրակացութիւններուն մէջ եղած փաստաթուղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները կը վկայեն, թէ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառումներ չէին, սահմանափակ կամ տեղական բնոյթ չունէին, այլ եղած են կանխամտածուած եւ իրականացուած են բացարձակապէս կուսակցութեան կեդրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յատուկ կեդրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով:

«Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան ղեկա-

վարներուն եւ անդամներուն դատաքննութեան ենթարկելու կայացած որոշումին մէջ (1335 թ. - 1919 թ. Մայիս) կը յիշուի, - «Միութիւն եւ Յառաջդիմութեան կուսակցութեան յանցագործ անդամներէն մէկն ալ կեդրոնական կոմիտէի մտայնացմամբ եւ որոշմամբ կազմուած տեղահանութեան օրէնքն էր, եւ ատոր գործադրման հետեւանքով Օսմանեան կայսրութեան բոլոր կողմերը յառաջ եկած ողբերգութիւնը: Լիովին ապացուցուած է, որ արեւելեան բոլոր վիլայէթներու մէջ տեղի ունեցած տեղահանութիւնը կեանքի կոչուած էր «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան ղեկավար անդամներէն կազմուած «Թաշքիլաթ-ը Մահսուսէ-ի» յանձնախումբի կողմէ, որուն նախագահը այդ շրջանին Պէհա Էտտին Շաքիր Պէյն էր»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 112 - 113)

Մեղադրական եզրակացութիւններուն եւ դատական նիստերու ընթացքին շեշտը դրուած է արեւմտահայութեան կոտորածներու վրայ:

Այս առնչութեամբ դատավարութիւններու ընթացքին դատավճիռին մէջ կը յիշուի, թէ կեդրոնական կոմիտէի անդամ եւ «Թէշքիլաթ-ը մահսուսէ»-ի նախագահ Պէհատտին Շաքիր Պէյը, էրզրումէն Սարբերդի պատասխանատու քարտուղար, փախուստի մէջ գտնուող Ռեանէլի Նազըմ Պէյին առաքուած ծածկագիր հեռագրին մէջ կ'ըսէ. -

«Ձեր միջոցով ուղարկուած հայերը կը ոչանչացուին թէ ոչ»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 157)

Իսկ ներքին Գործերու նախարարութեան յատուկ գրասենեակի պետ Իհսան Պէյ Նոյնպէս կը վկայէ, թէ երբ ինքը Քիլիսի քայմագամն էր, Սթամպուլէն Հալէպ գործուղուած Ապտուլհաստ Նուրի Պէյ կը յայտնէ, թէ «հայերու տեղահանման հիմնական նպատակը իրենց ոչնչացումն է» եւ ինք այդ հարցով կապի մէջ մտնելով Թալէաթ պէյի հետ, իրմէ ուղղակի հրաման կ'ըստանայ հայերը կոտորելու համար, զինք համոզելով, թէ այդ է երկրի փրկութիւնը: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 17)

Դատավարութեան 2-րդ, 5-րդ եւ 6-րդ նիստերուն հարցաքննութեան կ'ենթարկուին արեւմտահայութեան կոտորածն իրականացնող «Թէշքիլաթ-ը մահսուսէ»-ն, որ կեանքի կոչուած էր, կազմակերպուած «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամներու կողմէ իրենց յատուկ որոշումով:

Կովկասեան ճակատի երրորդ բանակի նախկին հրամանատար՝ Վեհիպ Փաշան դատաքննութեան ներկայացուցած իր վկայութեան մէջ այդ մասին կը յայտնէ, թէ «հայերու բնաջնջման եւ ունեցուածքի կողոպտման հարցը վճռուած էր «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէին, որ երրորդ բանակի շրջակայքի մէջ արնախումբ հրոսակախումբերու կազմակերպող ու ղեկավարողը Պէհատտին Շաքիր Պէյն էր»: («Հայերի Յեղասպանութիւնը» - էջ 17)

(Շարունակելի)





Ամառնային  
**Փառատոն**  
 Armenian Summer  
**FESTIVAL**

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
 NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Sunday June 8, 2014  
 Barnsdall Art Park  
**HOLLYWOOD**

4800 Hollywood Blvd Los Angeles, CA 90027  
 Starting at 11:00 am

**Live Music**

**Dancing**

**Art work Exhibition**

**Kids Games**

**Armenian Food**

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՄԱԴԱՄ ՀԱՇԵՐ

Sponsors



[www.massispost.com](http://www.massispost.com)

for more info please call  
 vNor Serount Cultural Association  
**(818) 391-7938**